



«Ինչքան աշխարհից հեռու, այնքան Աստծուն մոտ»:

Մարկոս Ջգնավոր

ԾԻՐԱԿԱՆ

ԱՐԱՐԱՏՅԱՆ



ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄԻ ԱՄՍԱԹԵՐԹ

2024 Թ., ՀՈՒՆԻՍ 7 (492)

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՅԻ ՔԱՐՈՉ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԿՈՒՅՍԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Վ ահա Փրկչի համբարձվելուց 12 տարի անց, մի օր, երբ իր սենյակում աղոթում էր Աստվածածին Կույսը, նրան հայտնվեց Գաբրիել հրեշտակապետը, ով հղիության ավետիսն էր տվել, և ասաց. «Ուրախ եղիր, բերկրյալ, Տերը քեզ հետ է», և տվեց արմավենու ճյուղեր՝ որպես աշխարհին հաղթելու նշան: Եվ հրեշտակը նրան կանչեց Ձիթենյաց լեռ, ուր նա սովոր էր աղոթել, և Տիրամայրը ելավ գնաց այնտեղ: Դարձյալ նրան երևաց հրեշտակը և ասաց. «Ուրախ եղիր, բերկրյալ, քանզի միածին որդիդ կանչում է քեզ Իր մոտ: Ասում է, թե օտարության մեջ քո պանդխտության ժամանակը լրացավ, արդեն եկ քո հայրենի սեփական ժառանգությունը: Մի՛ մնա մահվան այդ գավառի մեջ, քանզի անմահ կյանքի արժանացար, քանզի հաղթության նշան կանգնեցիր, հրեաներից բազում չարչարանք կրեցիր: Արդ, չարչարանքներիդ վախճանը եկավ, ավարտվեցին տառապանքներդ: Անցան տրտմություններդ, ժամանեց ուրախությունը: Հանգիստը պատրաստված է, կառուցված է լույսի խորանը, հարդարված՝ փառքի աթոռը: Այժմ եկ և հանգիստ առ բազում տառապանքներիցդ: Եվ վայելիր ինձ հետ՝ Իմ փառքը տեսնելով, որ կար նախքան աշխարհի ստեղծումը»: Այս ամենն ասելուց հետո հրեշտակը նրան տվեց հաղթության պսակն ու երկինք բարձրացավ:

Այդպես, երբ Սուրբ Աստվածածինը տուն վերադարձավ, ուժգին դողդաց ու շարժվեց ողջ տեղանքը, և ինքն իրեն վառվեցին բազում լույսի ջահեր: Տիրամայրը պատվիրեց կանչել իր ազգականներին ու հարևաններին և ասաց նրանց. «Մարեք բոլոր ջահերն ու եկեք, որ լսեք ինձ»: Եվ պատմեց նրանց Աստծո մեծագործություններից: Մինչ այսպես խոսում էր նրանց հետ, եկավ Կույսի հոգևոր որդին՝ Հովհաննեսը, ողջուն տվեց իր ծնողին: Եվ քանի որ կանայք տրտմությամբ էին լցված, հարցրեց, թե ինչն է պատճառը: Իսկ Ամենասուրբուհին զվարթ դեմքով և բերկրյալ սրտով ամբողջությամբ պատմեց հրեշտակի երևալու և իր՝ վերին արքայություն կանչվելու մասին: Եվ երբ Հովհաննեսը լսեց, արտասվելով ողբում, հառաչում էր՝ իր հոգևոր մորից որբանալու պատճառով: Եվ հանկարծ որոտում ու դողդյուն եղավ, և սրբազան առաքյալների դասերը, միասնաբար, ամպերով բարձրանալով, հավաքվեցին Տիրամոր տանը՝ ըստ այն խոսքի, թե՛ «Որտեղ մարմինն է, այնտեղ էլ կհավաքվեն արծիվները» (Ղուկաս 17:37): Եվ այստեղ Աստված հայտնեց նրանց ամենասուրբուհի Աստվածածնի նման մասին: Եվ երբ նրանք արցունք թափելով՝ ասում էին. «Ով Տիրոջ Մայր և Աստվածածին Կույս, քո Միածին Որդու համբարձվելուց հետո դու էիր սփռվում մեր տրտմությունը և քեզնով էինք զորանում բազում չարչարանքների մեջ: Եվ այժմ ո՞վ է մխիթարելու մեր վիշտը, ո՞վ է սփռվելու մեր նեղությունները, որ ամենուրեք շրջապատում են մեզ»: Սրբուհին պատասխանում է. «Ով

վսեմական դասեր, Իմ Որդու քարոզիչներ, որ ընտրվեցիք նախքան աշխարհի ստեղծումը: Ողբով մի՛ լցրեք իմ ուրախությունը: Մի՛ մտածեք մարդկայնորեն: Մխիթարիչին ունեք, Որով բոլոր վշտացյալներին մխիթարում եք: Ունեք Ձորացուցին, Որով



«Աստվածամոր վերափոխումը»
Նկարիչ՝ Հովնաթան Հովնաթանյան

վերացնում եք աշխարհի բոլոր տկարությունները: Արդ, մի՛ վիսատվեք վշտերից, մի՛ երկնչեք մարմինը չարչարողներից, մի՛ սարսափեք անցավոր մահից: Եվ դուք, ինչպես սովորեցիք Տիրոջից, հոգ տարեք ամենքի փրկության մասին և ինձ աղոթե՛ք ճանապարհեք Նրա մոտ, Ում անձկացել եմ, որպեսզի խաղաղությամբ անցնեմ խավարային իշխանությունների միջով և ժամանեմ երկնային նավահանգիստ: Եվ թող պանդխտության այս վայրում Տերը ձեզ հետ լինի ձեր կյանքի բոլոր օրերում»: Եվ երբ լռեց Սրբուհին, Հովհաննես ավետարանիչն առավ նոճու (որից պատրաստված էր և կենսաբեր խաչը) փայտից տախտակի վրա նկարված պատկերը, և բոլոր աշակերտներն այն բերեցին Սրբուհու մոտ և ասացին. «Մա՛յր Լույսի և տաճար բարձրյալ Բանի, աղաչում ենք քեզ, քանի որ պատրաստվում ես վերափոխվելու Միածին Որդու մոտ, ընդունիր այս պատկերը, որ նկարել է Հովհաննեսը, և դիր աստվածազարդ դեմքիդ, հոգևոր օրհնություններով օրհնիր այն և տուր որպես աշխարհի կյանքի առիթ, ինչպես Որդին քո Իր չարչարանքների փայտը տվեց որպես նշան աշխարհի փրկության: Այլև սրանով առողջություն գտնենք պես-պես վտանգներից և բորոտության ախտից, որ տարածված է այժմ երկրի վրա, մանավանդ Երուսաղեմում»: Եվ սուրբ Կույսն ասում է. «Ինչո՞ւ եք հարկադրում Տիրոջ աղախնուն իմ անունով անելու այս բանը, որին արժան չեմ: Դուք եք Քրիստոսի ընտրյալ աշակերտներ-

ը, խնդրեք Նրան, և կկատարվի ձեզ համար»: Եվ երբ անդադար թախանձեցին աշակերտները, առավ պատկերն իր սուրբ ձեռքերի մեջ, տարածեց աստվածաբարձ բազուկն իր, աղոթեց և օրհնեց պատկերը: Լույսի կամար կանգնեց Սրբուհու վրա, և խաչանման լույս կաթեց սուրբ պատկերին: Սրբուհին պատկերը դրեց իր սուրբ երեսին և թրջեց այն հորդառատ արցունքներով, որ թափում էր Տիրոջ առաջ: Պետրոսը վերցրեց պատկերը Աստվածածնի ձեռքից, և բոլորը մեծ երկյուղով երկրպագեցին Աստվածածին Կույսին և նրա սուրբ պատկերին: Այնուհետև սուրբ Կույսն առանձնացավ մի սենյակում, հանեց իրն հանդերձը և հագավ նոր ու սպիտակ շորեր՝ ցույց տալու համար նորոգ կյանքն ու պայծառ լույսը, որին փոխվելու էր, իսկ հիմը տվեց աղքատ կույսերին, որ նրա մոտ էին և պառկեց իր սուրբ անկողնին:

Սուրբ առաքյալները մինչ այգաբաց արթուն մտեցին նրա մահճի մոտ: Գովեստներ էին ներբողում Աստվածամոր փոխադրման և ժողովրդին խրատում նրա օգուտի համար: Եվ կեսգիշերին եղավ սաստիկ շարժում, ծագեց լույսի ճառագայթ, և տարածվեց անուշահոտությունը, որից շատերը թմրեցին: Եվ ահա տների Տերը և սերովբեների Թագավորն անմարմին զորքերի բազում հրեշտակներով բարձունքից խոնարհվեց՝ Իր ամենասուրբ ծնողի լուսապայծառ հոգին առնելու համար: Իսկ ընտրյալների դասերը կանգնել էին հիացած, երկյուղածությամբ ու խնդությամբ փառաբանում էին իրենց Տիրոջը, Ում մարմնով տեսնելուն արժանի եղան: Իսկ առավոտյան, որպես անուշաբույր խունկ՝ սուրբ Կույսն իր սրբասնյալ հոգին ավան-

ունեք մարդկային կերպարանք, բայց առանց սեռի: Պետրոսն ասում է. «Տե՛ր, մարդկանցից ո՞վ ունի այնպիսի լուսափայլ հոգի, ինչպիսին Քո ծնողինն է»: Պատասխանում է Տերը Պետրոսին. «Ով Պետրոս, բոլոր մարդկանց հոգիները սկզբնապես այդպես սպիտակ ու լուսափայլ են լինում, հետո են, մեղքերի շաղախվելով, սևանում ու տգեղանում»: Այս ասելով՝ Տերը հրեշտակների բազմությամբ վեր բարձրացավ:

Իսկ առաքյալներն աստվածընկալ սուրբ մարմինը փաթաթեցին կտավով, անուշահոտ խնկի բուրմունքի տակ, տառան Տիրոջ նախապես ասած տեղը՝ Գեթսեմանի ձորը՝ նրա հետ ունենալով նաև արմավենու ոստերով պսակը: Եվ խաչանման մի լույս, մինչև հանգստատեղին և մինչև գերեզմանից նրա վերափոխվելը, կանգնած մնաց աստվածակիր մարմնի վրա: Եվ ամամարմինների դասերը, աներևույթ կերպով պարակցելով առաքյալներին, հոգևոր պաշտամունքի երգեր էին երգում: Եվ տիրասպան հրեաները բարկացած՝ ամբոխին հրահրում էին սուրբ առաքյալների դեմ: Բայց աստվածասաստ բարկությամբ բոլորը կուրացան և գետնին էին ընկնում:

Առաքյալներն աստվածընկալ մարմինը տարան դրեցին գերեզման և երեք օր պահեցին, ինչպես նրանց պատվիրել էր Տերը: Եվ այդ օրերին գիշեր ու զոր անընդհատ հնչում էր հրեշտակների ձայնը, որը դադարեց միայն երրորդ օրվա ավարտին:

Իսկ սուրբ առաքյալ Բարդուղիմեոսը մնացյալ աշակերտների նման չէր ժամանել Տիրամոր վերափոխմանը: ...Երբ Բարդուղիմեոսը եկավ, խիստ տրտմեց և խնդրեց աշակերտներին, որ իրեն ցույց տան աստվածային զանգը: Եվ բացելով գերեզմանը՝ դատարկ գտան պատանքը աստվածակիր մարմնից: Մեծ զարմանքով հիացած՝ փառք տվեցին Աստծուն: Եվ իմացան, որ ամամարմին զորքի օրհնաբանության դադարից հետո Սրբուհին հենց նրանից՝ ամամարմին զորքի կողմից, վերափոխվել է ամանների իմանալի խորանները: Այսպես ժամանակ սգաց Բարդուղիմեոսը, քանի որ արժանի չեղավ տեսնելու Սրբուհուն, ինչը փափագում էր: Այդ պատճառով էլ աշխարհի մխիթարիչներն իրենց եղբոր սուգը մխիթարեցին՝ նրան տալով աստվածային զանգը՝ Աստվածամոր պատկերը: Եվ այն վերցնելով՝ Բարդուղիմեոսը լցվեց ուրախությամբ, ասես հենց իրեն՝ Սրբուհուն տեսավ, և տարավ այդ պատկերը Հայոց աշխարհները: Նրանով կատարում էր բազում հրաշքեր, ինչպես գրված է նրա վարքում: Իսկ առաքյալները որոշ ժամանակ մտեցին Երուսաղեմում, ապա ողջունելով միմյանց՝ ամեն մեկն իր վիճակը (իրեն բաժին ընկած երկիրը) գնաց:

Այսօր Աստվածածինը վերափոխվեց՝ մշտապես կենդանի մնալով, քանզի ճաշակեց անմահության բաժակը և մշտապես մեզ համար բարեխոս է իր միածին Որդու մոտ:

Աղբյուր՝ holytrinity.am



Սուրբ Գրիգոր Տաթևացի
Ձեռագիր, 1449 թ.

դեց իր Միածնի ձեռքը՝ ասելով. «Քո ձեռքն եմ հանձնում իմ հոգին»: Մեծ պատվով Տերն ընդունեց այն և տվեց Միքայել հրեշտակապետին: Եվ առաքյալները տեսան ամենամաքուր Կույսի հոգին, որը լույսի պես էր և արեգակից առավել էր փայլուն,

ԹԵՄԱԿԱՆ ԿՅԱՆՔ

ԵՐԵՒԱՆԵՐԸ ՄՐՅԵԼ ԵՆ ԱՍՏՎԱԾԱՆՉՅԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԻՆՏԵՐՈՒԹՅԱՆ



Ուլիսի 5-ին Երեբունի վարչական շրջանի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնում քրիստոնեական դաստիարակության դասընթացներին մասնակցող խմբերը մրցեցին աստվածաշնչյան գիտելիքների իմացությամբ: Մրցույթին մասնակցում էին նկարչության, գեղանկարչության, դիզայնի, հեղինակազորության խմբակների, «Մուշ» երգի ստուդիայի սաները և խմբավարները:



Սուրբ Գրքի իմացությունը ստուգվեց 4 փուլով: Վերջին փուլը հաղթահարեցին կենտրոնի դիզայնի խմբի սաները: Մասնակիցները ստացան նվերներ: Գնահատվեց նաև խմբավարների աշխատանքը:

Մրցողների գիտելիքները զննահատեցին մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի տնօրեն Ռուբեն Խնկոյանը, Երեբունի համայնքի հոգևոր հովիվ Տեր Դուկաս քահանա Բալայանը, Արարատյան Հայրապետական թեմի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Հասմիկ Նալբանդյանը:

ՎԱՐՈՎՎԱՆԸ ՄՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄՈՒՄ

Հուլիսի 7-ին Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին նշեց Հիսուս Քրիստոսի Պայծառակերպության տոնը, ժողովրդին առավել հայտնի՝ Վարդավառը: Արարատյան Հայրապետական թեմի Եկեղեցիներում մատուցվեց տոնական Սուրբ Պատարագ:


Վարդավառի ժողովրդական ավանդույթներից է միմյանց վրա ջուր ցողելը: Ավանդույթը պահպանելով՝ Սուրբ Պատարագից հետո մարդիկ եկեղեցիների բակում միմյանց վրա ջուր ցողեցին:

Նոր Նորքի Սուրբ Աստվածածին Եկեղեցում տոնական Սուրբ Պատարագից հետո տեղի ունեցավ համերգ, որի ընթացքում եկեղեցու երգչախումբը կատարեց շարականներ ու ժողովրդական երգեր:

Հիսուս Քրիստոսի Պայծառակերպության տոնը Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հինգ տաղավար տոներից մեկն է:

ՀՈԳԵՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԵՐԻՏԱՍԱՐԳՆԵՐԻ ՀՈԳԵՐԱՆԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԵՐՍՈՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Հուլիսի 10-ին Հայ-ռուսական համալսարանում իրա-



կանացված հանդիպմանը մասնագետները խոսել են ժամանակակից երիտասարդների արժեհամակարգի մասին: Համալսարանի և Երևանի Գիտության և մշակույթի ռուսական կենտրոնի կողմից կազմակերպված հանդիպումը երիտասարդների արժեքային կողմնորոշումները ժամա-

նակակից իրողությունների համատեքստում թեմայով էր: Ներկաները քննարկել ու ամփոփել են ժամանակակից իրողությունների պայմաններում երիտասարդների արժեքային կողմնորոշումների հիմնախնդիրների ուսումնասիրման հետազոտական փորձը:

Հանդիպմանը Հայ-ռուսական համալսարանի հրավերով և Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ գերաշնորհ Տեր Նավասարդ արքեպիսկոպոս Կոնյանի օրհնությամբ մասնակցել է թեմի ծխական խորհրդի անդամ Արմինե Վահանյանը: Վերջինս խոսել է հոգևորության դերի ու մշակութային մասին՝ ժամանակակից երիտասարդների հոգեբանական առողջության պահպանման գործում:

«Այն մարդը, որն ունի հոգևորության բարձր մակարդակ, ունի համարժեք ինքնագնահատական, վերլուծելու կարողություն, զարգացած է նրա ուշադրությունը, հիշողությունը, մտածողությունը: Բոլոր այն երիտասարդները, որոնք ունեն հոգևորության բարձր մակարդակ, ավելի հեշտ են հաղթահարում կյանքի ճգնաժամերը: Կարողանում են ինքնուրույն վերլուծություններ անել, ինքնագնահատել, ինքնակատարելագործվող էակներ են: Կարողանում են հասկանալ, թե իրենց արժեհամակարգն ինչի վրա է կառուցված», - իր խոսքում նշեց Արմինե Վահանյանը:

Մասնագետը զեկույցում անդրադարձել է հոգևորությանը՝ որպես հոգեբանական առողջության նախապայման, խոսել նաև էնթուզիազմության մեխանիզմների, ընտանիքի ինստիտուտի, ազգային իդենտիկության մասին:

ԱՅՑ ԿԻՐԱԿՆՈՐՅԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՍԱՆԵՐԻ ՈՒՆՏԱԳՆԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Արարատյան Հայրապետական թեմի կիրակնօրյա դպրոցների սաները ուսումնական տարին ամփոփել են ուխտագնացություններով:

Սուրբ Աննա և Կաթողիկե Սուրբ Աստվածածին Եկեղեցիների հոգևոր հովիվ Տեր Զենոն քահանա Բարսեղյանի նախաձեռնությամբ եկեղեցու կիրակնօրյա դպրոցի սա-



ները մեկնեցին ուխտագնացության դեպի Արագածոտնի թեմի սրբավայրեր:

Զորավոր Սուրբ Աստվածածին Եկեղեցու կիրակնօրյա դպրոցի սաների ուղղությունը ևս դեպի Արագածոտնի մարզ էր: Երեխաներն ուխտագնացություն կատարեցին Բյուրականի Սուրբ Հովհաննես Եկեղեցի, Տեղերի վանական համալիր, Աղծքի Արշակունիների արքայական դամբարան ու պատմական տեղեկություններ ստացան Արշակունիների գահակալման ընթացքի և դամբարանի մասին:

Նորագավիթի Սուրբ Գևորգ Եկեղեցու կիրակնօրյա դպրոցի սաները, այցելելով Արագածոտնի մարզ, եղան Մուղնիի Սուրբ Գևորգ, Փարպիի Սուրբ Աստվածածին, Սուրբ Մարիանե, Օշականի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցիներում, Հովհաննավանք վանական համալիրում:

Դավթաշենի Սրբոց Նահատակաց Եկեղեցու կիրակնօրյա դպրոցի սաները համախմբվեցին միասնական աղոթքի շուրջ Արուճի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Եկեղեցում:

Սուրբ Հովհաննես Եկեղեցու կիրակնօրյա դպրոցի սաներն ու ծնողները տեղի Տիրայրի օրհնությամբ ու առաջնորդությամբ գնացին ուխտագնացության Տավուշի թեմի եկեղեցիներ: Այցելեցին Աղավնավանք, Գոշավանք:

Վերին Շենգավիթի Սրբոց Առաքելոց Եկեղեցու կիրակնօրյա դպրոցի փոքրիկ ուխտավորներն այցելեցին Խոր վիրապ վանք, Մրգավանի Սուրբ Հակոբ Եկեղեցի: Սաները եղան նաև Վազգեն Սարգսյանի տուն-թանգարանում: Օրն ամփոփեցին Երևանի Վարդանյանների այգում:

Նորք-Մարաշի Սուրբ Աստվածածին Եկեղեցու կիրակնօրյա դպրոցի սաները, եկեղեցու հոգևոր հովիվ Տեր Զա-

քարիա քահանա Ավետիսյանի առաջնորդությամբ, նույնպես ուխտագնացության մեկնեցին Խոր Վիրապ վանք՝ աղոթելու առ Աստված մեր երկրի արժանապատիվ խաղաղության ու բարեկեցության համար:

ՕՐԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՊՆՆԱՆՆՔԻ ԳԻՐ՝ 60-ԱՄՅԱ ՀՈՐԵԼՅԱՆԻ ԱՌԹԻՎ

Հուլիսի 17-ին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ գերաշնորհ Տեր Նավասարդ արքեպիսկոպոս Կոնյանը Մալաթիայի Սուրբ Աստվածա-



ծին եկեղեցու հոգևոր հովիվ Տեր Տիրան ավագ քահանա Առուշանյանին 60-ամյա հորեյանի և երկարամյա վաստակի համար արժանացրեց Օրհնության և գնահատանքի գրի:

Օրհնության գրում մասնավորաբար ասվում է. «Այն երեցները, ովքեր լավ վերակացու են, կրկնակի պատվի թող արժանանան» (Ա Տիմոթեոս Ե 17): Երեք տասնամյակից ավելի Ձեր ծառայասիրությամբ, նախանձախնդրությամբ և նվիրումով Սուրբ Ավետարանի հունդերն եք ցանում մեր Եկեղեցու անդատաններում՝ արժանիորեն վայելելով հավատավոր զավակների և հոգևոր եղբայրների սերն ու ջերմությունը: Ձեր համայնքի անդամներին հայրական անսպառ հոգածությամբ և սիրով ուսուցանում եք՝ ավետարանական պատգամները՝ նրանց հոգիներում առատացնելով սերն առ մերձավոր և առ Աստված:

Հղում ենք Ձեզ և Ձեր ընտանիքին մեր բարեմաղթանքներն ու օրհնությունները՝ ցանկանալով աստվածաշնորհ խաղաղություն և բազում արկշատ օրեր: Աղոթք ենք առաքում առ Աստված, հայցում քաջառողջություն և Տիրոջ բարեխնամությունը՝ Ձեր առաքելության անխախտ ընթացքի համար»:

ՀԱՄԱՐԱՆԵՐ ԱՅՑ ԿԻՐԱԿՆՈՐՅԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՍԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ գերաշնորհ Տեր Նավասարդ արքեպիսկոպոս Կոնյանի օրհնությամբ կազմակերպված ամառային ճամբարներում թեմի կիրակնօրյա դպրոցների սաները ստանում են հոգևոր գիտելիքներ, մասնակցում տարբեր կրթական ու մշակութային ծրագրերի:

Նուբարաշենի Սրբոց Նահատակաց Եկեղեցու բակում երեխաները մեկ շաբաթ է՝ մասնակցում են հոգևոր, քրիստոնեադաստիարակչական գրույցների, վարպետաց դասերի, Աստվածաշնչի ընթերցումների, նաև՝ ազգագրական երգի և պարի ուսուցման դասերի:



Դավթաշենի Սրբոց Նահատակաց Եկեղեցու բակում անցկացված ամառային տասնօրյա ճամբարն իր շուրջը համախմբեց տարբեր համայնքների երեխաներին: Ճամբարի 6-ից 13 տարեկան մասնակիցները հարստացրեցին իրենց հոգևոր գիտելիքների պաշարը, զուգահեռ մասնակցեցին տարբեր մշակութային ծրագրերի: ➔ էջ 3

Էջ 2

Վերին Շենգավիթի Սրբոց Առաքելոց եկեղեցու բակային հողերը ճամբարը նախատեսված էր 5-15 տարեկան երեխաների համար, որի նպատակը երեխաների մեջ եկեղեցասիրություն, Աստվածաշնչի ու Տիրոջ հանդեպ սեր, հայրենասիրություն սերմանելն էր: Ծրագրում, քրիստոնեական դաստիարակության դասընթացներին զուգահեռ, ազգային երգ ու պարի ուսուցումն էր:

Նոր Նորքի Սուրբ Աստվածածին եկեղեցու՝ «Տիրամոր մանկունք-2024» հոգևոր-բակային ճամբարն էլ մեկնարկեց հուլիսի 23-ից և կանցկացվի մինչև օգոստոսի 1-ը: Երեխաները եկեղեցու բակում կմասնակցեն հոգևոր զրույցների, կսովորեն շարականներ, աղոթքներ, նաև կմասնակցեն ասեղնագործության, նկարչության, երգի, պարի, կավագործություն դասընթացներին: Ճամբարականները կմեկնեն նաև ուխտագնացության՝ Սաղմոսավանք վանական համալիր:

ՂԱՍԵՆԹԱՅ ԿԻՐԱԿՆՈՐՅԱՆ ԳՊՐՈՑՆԵՐԻ ՌԻՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ գերաշնորհ Ս. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի օրհնությամբ թեմի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Հասմիկ Նալբանդյանը կիրակնօրյա դպրոցների ուսուցիչների համար հուլիսի 15-ից 19-ը կազմակերպել էր սեմինար-դասընթաց: Դասընթացի շրջանակում ուսուցիչներն անդրադարձան դասավանդման մեթոդական հարցերին, ինչպես նաև հնարավորություն ունեցան փորձի փոխանակման, երեխաների համար թեմատիկ խաղեր, դիդակտիկ նյութեր, տեսադասեր պատրաստելու, համակարգչային օգտակար ծրագրեր ուսանելու:



րակության կենտրոնի տնօրեն Հասմիկ Նալբանդյանը կիրակնօրյա դպրոցների ուսուցիչների համար հուլիսի 15-ից 19-ը կազմակերպել էր սեմինար-դասընթաց: Դասընթացի շրջանակում ուսուցիչներն անդրադարձան դասավանդման մեթոդական հարցերին, ինչպես նաև հնարավորություն ունեցան փորձի փոխանակման, երեխաների համար թեմատիկ խաղեր, դիդակտիկ նյութեր, տեսադասեր պատրաստելու, համակարգչային օգտակար ծրագրեր ուսանելու:

Ուսուցիչների խնդրանքով «Հավիտենական կյանք» թեմայի շուրջ բանախոսություն կարդաց Տեր Եսայի քահանա Արթենյանը: Սպասված էր նաև հանդիպումը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն հոգեշնորհ Տեր Զաքարիա Ծայրագույն վարդապետ Բաղդուկյանի հետ: Հանդիպման առանցքային թեման, ՀԵՊ առարկայի դպրոցական ծրագրից դուրս գալուց հետո, Հայ Առաքելական Սուրբ եկեղեցու կրթադաստիարակչական առաքելության մեջ կիրականօրյա դպրոցների հետագա ծավալմանն ուղղված ռազմավարական, վարչական, ուսումնամեթոդական հարցերն էին:

«ՀԱՄԱՅՆՔԸ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԳԸ» ՍԵՄԻՆԱՐ ԵՐԻՏԱՍԱՐԳՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հուլիսի 25-ին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ գերաշնորհ Ս. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի օրհնությամբ թեմի երիտասարդաց միությունների հոգևոր հովիվ Տեր Պետրոս ավագ քահանա Մալյանի գլխավորությամբ երիտասարդները առաջնորդարանում մասնակցեցին «Համայնքը և երիտասարդը» խորագրով ծրագրի դասախոսությանը:

Այն նախաձեռնել էր Հայ եկեղեցու համաշխարհային երիտասարդաց միությունը (ՀԵՀԵՄ): Սեմինարը վարեց ՀԵՀԵՄ ԿԳ փոխտնօրեն և ծրագրերի պատասխանատու, ծրագրի հեղինակ, երիտասարդական աշխատանքի փորձագետ Անգելինա Ալեքսանյանը:

Դասընթացի նպատակը թեմական երիտասարդաց միությունների ակտիվացումն է՝ տալով հավելյալ մեթոդական գործիքներ ու գիտելիքներ, թե ինչպես կարող են մոտիվացնել ու ակտիվացնել տեղի երիտասարդությանն ու համախմբել եկեղեցուն, ինչպես թեմական միությունների աշխատանքը դարձնել զրավիչ ու օգտակար, որպեսզի երիտասարդները սիրով միանան աշխատանքներին, լինեն նախաձեռնող ու թեմը ակտիվացնող:

ՆԱՎԱՍԱՐԳ ՍՐԲԱԶՆԵՆ ԱՅՑԵԼԵՑ ՀԱՄԱՐԱԿԱՆՆԵՐԻՆ

Հուլիսի 29-ին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ գերաշնորհ Տեր Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանն այցելեց թեմի Նոր Նորքի Սուրբ Աստվածածին եկեղեցի, որտեղ գործում է ամառային բակային ճամբար:

Սրբազան հորը դիմավորեցին եկեղեցու հոգևոր հովիվ արժանապատիվ Տեր Աշոտ քահանա Սաֆարյանը,

ճամբարի պատասխանատու Մերինե Նիկողոսյանը, համայնքի անդամներն ու ճամբարական երեխաները:

Ճամբարն արդեն 7-րդ անգամ կազմակերպել են եկեղեցու համայնքի երիտասարդաց ու Տիկնանց միությունները՝ տեր Աշոտի գլխավորությամբ: Այս տարի ճամբարի մեկնանքը եկեղեցու խաչքավոր Ռաֆայել Մովսեսյանն է:

Ամեն տարի մեծանում է մասնակիցների քանակը: Այս տարի 95 երեխա են ընդունել ճամբար, թեպետ ցանկացողները շատ ավելի շատ էին: Երեխաներն ըստ տարիքա-



յին խմբերի բաժանվել են 4 ջոկատի: Յուրաքանչյուրը մեկ ավետարանչի անունով է՝ սուրբ Մատթեոս, սուրբ Մարկոս, սուրբ Դուկաս և սուրբ Հովհաննես:

Ճամբարում գործում են ասեղնագործության, կավագործության, աշխարհիկ ու հոգևոր երգերի, ազգագրական պարի, նկարչության ու կավագործության խմբակներ:

Կազմակերպվում է սպորտաձևով՝ բակային ու սպորտային ուրախ խաղերով:

Տեր հայրը և Տիգրան սարկավագն ամեն օր հոգևոր զրույցներ են անցկացնում երեխաների հետ, առակների միջոցով հոգևոր ու քրիստոնեական գիտելիք փոխանցում նրանց:

Նավասարդ Սրբազանը շրջեց ջոկատներում, զրուցեց երեխաների հետ, ունկնդրեց երաժշտական կատարումներ:

Այցի ավարտին Նավասարդ Սրբազանն իր գոհունակությունը հայտնեց տեր Աշոտին ու համայնքի անդամներին՝ երեխաների համար ճամբարը հազեցած ու բովանդակային ծրագրով կազմակերպելու, կամավորաբար իրենց ժամանակն ու գիտելիքը ներդնելու համար:

Արարատյան Հայրապետական թեմի տեղեկատվական բաժին

ՎԱՐԴԱՎԱՌ ԵՎ ԱՎԵԼԻՆ

«Օրհնիր Տիրոջը, ով իմ անձ, Տեր իմ Աստված, անչափ մեծ ես գովաբանությամբ ու մեծափառությամբ զգեստավորվեցիր: Լույսը կրեցիր ինչպես վերարկու. երկինքը փռեցիր վրանի պես» (Սաղմոս 103:1-2):

Քրիստոնեությունը Աստծո սիրո մեծագույն արտահայտությունն է Իր արարածի նկատմամբ: Աստված անոխակալ է և ուզում է, որ մենք էլ այդպիսին լինենք ու դրանով նաև հասնենք կատարելությանը, որին Ինքը մեզ կոչում է: Մարդը, որը ձգտում է դեպի Աստված, դեպի կատարյալը, իր մեջ պիտի կրի նաև աստվածային որակները: Դա այնքան էլ հեշտ չէ, բայց նաև դժվար էլ չէ, եթե քո մեջ նստած է ամուր ու աներեր հավատքը: Այն պարզ ու հստակ հայելի է, որ ճշմարտապես ցույց է տալիս յուրաքանչյուրի ներքին հոգեվիճակը: Հավատքն աստվածային սրբազան խորհուրդներն ուսուցանող լավագույն ուսուցիչն է: Խաչատուր Աբովյանը գրում է. «Ազգին պահողը հավատն է, լեզուն»:

Երևանի Նոր Նորքի Մարիամ

Աստվածածին եկեղեցուն մասնակցում էի Սուրբ և Ամնահ Պատարագին: Ճիշտ է՝ եկեղեցին ծավալով փոքր է, սակայն եկեղեցու սրբազան պատերի տակ, արդեն իսկ ձևավորված կուռ համայնքի հոգածությամբ, հովանոցների ներքո հարմարավետ աթոռներ էին դրել, և ողջ հավատավոր ժողովուրդը միասիրտ ու միական աղոթում էր: Պատարագի քահանան Տեր Աշոտ քահանա Սաֆարյանն էր: Պատարագը սկսելուն պես, ամբաքոյց պիտի ասեմ, կտրվելով իրականությունից, ես ինձ զգում էի հեքիաթի աշխարհում... Քահանայի հնչեցրած խոսքերին հաջորդաբար միանում էին սարկավագների ու երգչախմբի մեղմանուշ մեղեդիները, սաղմոսներն ու շարականները: Մի կողմից էլ երիտասարդ մայրիկների մանկասայլակների միջից արտաբերած հրաշամանուկների գեղգեղուն, երբեմն էլ՝ «անհասկանալի» ձայները, որոնք ոչ թե խանգարում, այլ էլ ավելիով հուզիչ ու սիրառատ էին դարձնում մատուցվող խնկաբույր Պատարագը:

Եկեղեցին մարդաշատ էր, բո-

լոր հավատացյալները համակ ուշադրությամբ լսում էին քահանայի քարոզը: Տեր Աշոտը համբերատար ու հանգամանակից բացատրում էր պայծառակեր-



պության խորհուրդը՝ ինչո՞ւ Տերը աշակերտներից միայն երեքին՝ Պետրոսին, Հակոբոսին ու Հովհաննեսին տարավ Իր հետ տեսնելու համար աստվածային փառքը, ինչո՞ւ մարգարեներից Մովսեսին ու Եղիային Տերը բե-

րեց լեռան գագաթը...

Քահանան օրվա խորհրդին վերաբերող բոլոր հարցերին անդրադարձավ առավել մանրակրկիտ, հստակ ու զրազետ:

գոհունակությունը պիտի հայտնենք մեր Տեր Աստծուն նման հնարավորությանն արժանացնելու համար:

Սուրբ Պատարագի ավարտին սրտամոտ ու հյուրընկալ բակում ելույթ ունեցավ եկեղեցու երգչախումբը: Կատարվեցին հայկական ժողովրդական երգեր, ինչպես նաև հոգևոր երգերի հոգեմայլ շարականներ: Ուրախ ու հոգեշահ ժամանց էր, այնքան ոգևորիչ, որ թե՛ մեծերը, թե՛ փոքրերը չէին ցանկանում տուն վերադառնալ: Համերգն ավարտվեց մեծն Կոմիտասի պերճաշուք «Սոնա յար»-ի սիրաթրթիռ ավարտով...

Ծաղկանուշ ԲԱԴԴԱՍԱՐՅԱՆ ԲԴԿ-ի մանկավարժ



ՄԵՐ ՀՈԳԵՎՈՐ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ՎԵՐՄԱՐՈՒԿԱՅԻՆ, ԵՐԿՆԱՅԻՆ, ԼՈՒՍԱՎՈՐ...

Մենք դեր ունի հոգևոր երաժշտությունը մեր կյանքում, ինչպես կարող է փոխել մեզ: «Շողակն Արարատյան» ամսաթերթի զրուցակիցը՝ Արաբկիրի Սուրբ Խաչ եկեղեցու երգչախմբի գեղարվեստական ղեկավար Շահե Քեչիջյանը, գիտի պատասխանել: Իր ղեկավարած երգչախումբն ամեն կիրակի եկեղեցում կատարում է Կոմիտասի «Պատարագ»-ը:

Հոգևոր երաժշտության դերը

Ես մեծացել եմ եկեղեցում, իմ երաժշտական ճաշակը ձևավորվել է այնտեղ, ազդվել եմ հոգևոր երաժշտությունից, այդ ամենը կարծես ներծծվել է իմ մեջ: Մայրս և հայրս լավ երաժշտական տվյալներ են ունեցել, թեև մասնագիտությամբ երաժիշտներ չեն: Մայրս երգել է եկեղեցու երգչախմբում և 6 տարեկանից ինձ տարել է եկեղեցի: Այդ ժամանակվանից շապիկ եմ հագել ու մինչև օրս ծառայում եմ: Թեև դպրոցն ավարտելուց հետո ընդունվեցի Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան, որոշ ժամանակ անց հասկացա՝ երաժիշտ պետք է լինեմ: Ավարտեցի Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի երկու բաժիններ: Հետագայում կրկին ընդունվեցի ու ավարտեցի ևս մեկ բաժին: Սովորել կարելի է ամեն օր՝ մինչև կյանքի վերջ:

Եկեղեցական երգչախմբերի առաքելությունը

Ես Արաբկիրի Սուրբ Խաչ եկեղեցու երգչախմբի գեղարվեստական ղեկավարն եմ, բայց քանի որ կազմը փոքր է, նաև երգում եմ: Երգչախումբը ձևավորվել է 6 տարի առաջ: Հենց սկզբից ունեի

մտահղացումը և ստացա Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ գերաշնորհ Տեր Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի օրհնությունը, որ կատարեմք Կոմիտասի «Պատարագ»-ը՝ արական կազմով, թեև այն կատարելը



Շահե Քեչիջյան

բարդ է: Սուրբ Պատարագը բաղկացած է 4 հիմնական մասերից: Ֆանտաստիկ է, թե որքան ճիշտ է Կոմիտասն այդ ամենը զգացել ու մատուցել: Տարիներ շարունակ երգչախմբով երգում ենք Կոմիտասի «Պատարագ»-ը՝ ամեն անգամ մեզ համար նորը բացահայտելով: Ամեն անգամ որոշ հատվածներ կատարելիս փշաքաղվում

ենք: Մենք՝ եկեղեցական երգչախմբերս, ունենք առաքելություն՝ մարդկանց տալիս ենք հոգևոր դաստիարակություն: Պարտավոր ենք շարունակ ջանք չխնայել, որ մեր կատարումը չվերածվի մեխանիկական աշխատանքի: Եթե չկարողանանք ժողովրդի հոգու մեջ ներթափանցել, անիմաստ է ամեն բան:

Աստղերից, տիեզերքից եկած ձայների վերարտադրումը

Չայնի արտաբերումների, խորհրդանշների, երաժշտական շարժումների, հարմոնիաների հիմքը հազարամյակներ առաջ եկել է Աստծուց: Երաժշտությունը բնությունից, աստղերից, տիեզերքից եկած ձայների վերարտադրումն է: Երաժշտությունն ունի ներգործություն բնության վրա, իսկ մենք բնության մի մասնիկն ենք: Դա փաստում են մի շարք հետազոտություններ, որոնք ցույց են տալիս, թե, օրինակ, ջրի մոլեկուլը ինչպես է փոխվում, երբ հնչում է լավ երաժշտություն և հակառակը: Մեր հոգևոր երաժշտությունը՝ հատկապես Կոմիտասի, գերմարդկային է, երկնային: Ես առիթ եմ ունեցել ելույթ ունենալու աշխարհի տարբեր կետերում ու միշտ լսել եմ այդ կարծիքը: Հոգևոր երաժշտության մեջ կա վեհություն, ցնծություն, ուրախություն: Այն դրական է, լուսավոր, ուղղորդում է դեպի Աստված, չունի ագրեսիա, վայրագություն: Մեր եկեղեցական երաժշտությունն ունի հազարամյակների պատմություն, և այնտեղ կողավորված է մեր ժողովրդական իմաստությունը: Անկախ մեր գիտակցությունից՝ այն ներգործություն ունի մեզ վրա, սակայն մենք պետք է թույլ տանք, որ այն մտնի մեր գիտակցության մեջ: Հասա-

րակությունը սովորաբար ընդունում է այն, ինչ իրեն տալիս են: Ժամանակ է պետք, որ ճաշակը զարգանա: Սկզբում, երբ Կոմիտասի «Պատարագ» էինք երգում եկեղեցում, ժողովրդի համար խորթ էր, քանի որ սովոր են լսել Մակար Եկմալյանի մշակած «Պատարագ»-ը: Մենք շարունակեցինք ամեն կիրակի երգել Կոմիտասյան մշակումը, նույնիսկ երբ եկեղեցում լռություն էր, միացնում էինք այդ ստեղծագործության ձայնագրությունը: Որոշ ժամանակ անց մարդիկ սովորեցին: Այժմ նրանք սպասում են: Ուրախալի է, որ որոշակի մշակույթ ենք ձևավորել, մեր եկեղեցի այցելող մարդիկ սկսել են զգալ այդ վեհությունը:

Պատրաստվել, ճանապարհ անցնել՝ վեհ ընկալելու համար

Թեև մեր բոլորի ընկալունակությունը նույնը չէ, ամեն դեպքում լավ երաժշտությունը հասկանալու համար այն պետք է անընդհատ լսել: Ընդհանրապես վեհ ընկալելու համար՝ պետք է պատրաստվել հոգեպես, անցնել, պահեցողության, խոկման շրջան: Սուրբ Պատարագի խորհուրդը հասկանալու համար՝ պետք է մասնակցել արարողությանը՝ սկզբից մինչև վերջ: Պետք է առաջին բառից, հնչյունից մինչև վերջին զարգացումն ապրել, որ կարողանանք ընկալել, մաքրվել, արժանանալ Սուրբ Հաղորդությանը: Եթե հոգեպես չենք պատրաստվել, չենք անցել այդ ճանապարհը, մեր մարմինն էլ դա չի ընդունի: Քրիստոս ասաց. «Բախե՛ք, և ձեր առաջ կբացվի» (Մատթեոս 7:7): Այսինքն՝ պետք է ջանք թափել:

Պատրաստեց ԱՆԻ ԱՎԱԳՅԱՆԸ

ՍՈՒՐԲ ՀՈՎՅԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆԻ ԽՈՍՔԸ ՊՈՂՈՍ ԱՌԱՔՅԱԼԻ՝ ՏԻՏՈՍԻՆ ՈՒՂՂՎԱԾ ԹՂԹԻ ՄԱՍԻՆ

«Իսկ երբ մեր Փրկիչ Աստծու քաղցրությունը և մարդասիրությունը հայտնվեց ոչ այն արդարության գործերի համար, որ մենք արեցինք, այլ իր ողորմության համաձայն, փրկեց մեզ վերստին ծննդյան ավազանի միջոցով և նորոգությանը Սուրբ Հոգու, որ Աստված թափեց մեր վրա առատությամբ մեր Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի միջոցով, որպեսզի, նրա շնորհով արդարացված, ժառանգներ լինենք հավիտենական կյանքի հույսով» (Տիտոս 3:4-7):

Երբեմն, ասում է, անմիտ էինք, անհնազանդ և մոլորված: Այլ երբ հայտնվեցին մեր փրկիչ Աստծու քաղցրությունն ու մարդասիրությունը, ոչ թե ըստ մեր արդար գործերի, այլ ըստ Իր ողորմության, փրկվեցինք վերստին ծննդյան ավազանի միջոցով և Սուրբ Հոգու նորոգությամբ: Որքա՞ն էինք լցված չարով, չէինք կարողանում մաքրվել և կարիք ունեինք վերստին ծննդյան: Ինչպես, օրինակ, երբ տունը խարխուլ է, հնարավոր չէ այն նոր շինությանը կարկատել, այլ պետք է հինը հիմնովին քանդել և նորը կառուցել, նմանապես նաև այստեղ, վերստին կառուցեց, որովհետև Հոգով վերստին ստեղծեց մեզ, ինչպես որ մեկ այլ տեղ ասում է, թե. «Աստված թափեց մեզ վրա առատությամբ մեր Փրկչի՝ Հիսուսի Քրիստոսի միջոցով» (Տիտոս 3:6): Մեզ շատ էր պետք Սուրբ Հոգին, որպեսզի Նրա շնորհով արդարանայինք:

Շնորհով և ոչ թե պարտքով «ժառանգներ լինենք հավիտենական կյանքի հույսով», միաժամանակ նաև՝ խոնարհ հոժարակամությամբ և հավիտենական կյանքի հույսով:

Ի՞նչ է նշանակում՝ «հավիտենական կյանքի հույսով»: Ինչպես հուսացիք, ասում է, այդպես էլ պիտի վայելեք: «Ճշմարիտ են այս խոսքերը» (Տիտոս 3:8), քանզի հանդերձալի մասին խոսեց, ինչը մոտակա ժամանակներում չի լինելու և պետք է այդ ամենին հավատարիմ լինել: Ճշմարիտ են այս խոսքերը և կատարվելու են: Այդքան անօրինություններից և չարիքներից փրկեց մեզ, պարզ է, որ ապագայում էլ արժանի է դարձնելու մեզ այս ամենին: Ուրեմն՝ հաստատում մնանք շնորհի մեջ, քանզի ամեն ինչ Նրա նախախնամությամբ է լինելու:

Այսուհետև գոհացող լինենք Աստծուց և ոչ ոքի չնախատենք, չբամբասենք, այլ մխիթարենք, աղոթենք, խրատենք: Եթե նույնիսկ թշնամանան, եթե մարտնչեն մեր դեմ, մենք մտաբերենք, որ հորդորելու պատվեր ենք ստացել, քանզի այդպիսին է հիվանդների բնավորությունը: Ովքեր ցանկանում են նրանց առողջացնել, ամեն ինչի համբերում են, ամեն միջոց կիրառում են, և եթե նույնիսկ չեն էլ վճարում, այդ մասին չեն մտածում: Մի՞թե չգիտեք շատ դեպքեր, երբ նույնիսկ հիվանդը բժշկի

կողմից անհույս է համարվում, սակայն այդ ժամանակ էլ ամեն միջոց կիրառում են դարմանելու համար, որ ոչինչ պակաս արած չլինեն և իրենց մասին չբամբասեն, թե՛ անտեսեց հիվանդին: Զե՞ք տեսնում, թե որքան զանազան դեղամիջոցներ են կիրառում, որքան միջոցներ են հնարում մարմինը փրկելու համար: Գոհեն նրանց մնամկեք: Եվ եթե մի մանուկ հիվանդանում է, հայրը արագ հեռու ճանապարհ է գնում, որպեսզի ցավի դարման գտնի, սակայն երբ հոգին որևէ ախտի մեջ է, ոչ մի միջոց չի ձեռնարկում: Բոլորս ծուլացել ենք, անհոգության մատնվել, ամեն ինչում ալարկոտ ենք դարձել, չենք մտածում մեր անձերին դարմանելու մասին, որ այսքան ապականված ախտերի մեջ ենք:

Մտաբերի՛ր, թե ինչից են վատ սովորությունները, որոնց համար պատիժ է սահմանված: Եթե այս աշխարհում անմտություն է արհամարիել հանդերձալ կյանքը, ապա որքան առավել այնտեղ, եթե այժմ լսում ենք շատերից և խրատվում շատերի կողմից, և պատվեր ստանում, թե ինչ գործենք, ինչ՞ ոչ, և ծուլանում ենք, ապա ի՞նչ պիտի անենք, երբ այլևս պաշտպանություն չունենանք: Ամուր բռնենք հույսից, հոգանք մեր փրկության մասին, աղաչենք Աստծուն, որպեսզի պաշտպանի մեզ: Մինչև ե՞րբ ենք ծուլանալու և անփութ գտնվելու մեր ծառայակիցների

հանդեպ: Նա առատապես հեղեց մեզ վրա Իր Հոգու շնորհները, մտաբերենք նաև մենք, թե ինչ են մեզ ցույց տալիս շնորհները, որպեսզի մենք էլ ջանասիրություն ունենանք, հատկապես, որ չենք կարող այդքան շատ ջանք ցուցաբերել: Իսկ եթե այդպիսի շնորհների հանդեպ անտաղանդ գտնվենք, բազում պատիժներ պիտի կրենք, քանզի ասում է. «Եթե ես եկած և նրանց հետ խոսած չլինեի, նրանք որևէ մեղք ունեցած չէին լինի, բայց հիմա իրենց մեղքի համար ոչ մի արդարացում չկա» (Հովհաննես 15:22): Այնպես չլինի, որ մենք էլ այսպիսի խոսքեր լսենք, այլ թող բոլորս հասնենք Իր սիրելիներին խոստացած բարիքներին շնորհով և մարդասիրությամբ մեր Տեր Հիսուս Քրիստոսի, Նրա հետ նաև Հորը և Սուրբ Հոգուն փառք, իշխանություն և պատիվ, այժմ և միշտ և հավիտյան հավիտենից. ամեն:

Փոխակերպումը գրաբարից՝ Գայանե ԹԵՐԶՅԱՆԻ



ԴՐԱՆՏԻ ԸՆՏԱՆԻՔ

ՆՈՒՐԻՋԱՆՆ ՈՒ ԻՆՉԱՆ...

«Շողակն Արարատյան» ամսաթերթի սիրելի ընթերցողներ, «Դրախտի ընտանիք» խորագրով մեր շաբաթի գրուցակիցներն են «Յունիքանկ» ԲԲԸ Դատական ղեկավարամենտի տնօրեն, իրավաբան Նուրիջան Կիրակոսյանն ու «AC Design Engineering» կազմակերպության մարդկային ռեսուրսների կառավարման ղեկավար, բանասեր, իրավաբան Ինգա Կյուրեղյանը:

Ձույգի տասնհինգամյա ընտանիքում մեծանուն են երեք գեղեցիկուհիներ՝ Մերին, Նատալիյն ու Անիտան: Զրուցակիցներս դուստրերին են փոխանցում անսահման սեր ու հոգատարություն, կրթում անձնական օրինակով, սովորեցնում լինել խոհեմ ու հեռատես, իսկ նրանցից՝ սովորում լինել հանդուրժող և համբերատար: «Մենք ցանկանում ենք, որ մեր զավակները մեզից ավելի լավ լինեն, դիմացինի մեջ գնահատեն մարդկային արժեքները և, անկախ նրանից, թե մեծանալով ինչ մասնագիտություն կընտրեն՝ ուզում ենք, որ լավ մարդ դառնան: Իրականում այս սերնդի հետ այդքան էլ հեշտ չէ, նրանք հասկանում են ամեն բան և պահանջում, որ դու էլ համապատասխանես այդ ամենին: Բնականաբար, այդ ընթացքում բախվում ենք երեխաների՝ բջջային հեռախոսներից ունեցած կախվածությանը, բայց ամեն կերպ փորձում ենք շեղել նրանց, գրուցում ենք շատ, միասին հետաքրքիր գրականություն ենք կարդում, որ հունի մեջ ընկնեն և սկսեն ինքնուրույն ընթերցել»,- ասում է Նուրիջանը, իսկ Ինգան հավելում է, որ աղջիկները հաճախում են տարբեր պարապմունքների մոր գիտե-

լիքներ ծեռք բերելու և հետաքրքիր ժամանակ անցկացնելու համար:

Զրուցակիցներս մինչ ամուսնությունը տարիներ շարունակ եղել են լավ ընկերներ: Ինգային գրավել և առ այսօր զարմացնում է Նուրիջանի գիտելիքների մեծ պաշարը. «Ես գտնում եմ՝ ընտանիքում տղամարդը պետք է ավելի խելացի լինի, քան կինը, ու վերջինս պիտի իր թիկունքին զգա տղամարդու հզոր ուժը: Կարևորում եմ տղամարդու սերն ու նվիրվածությունն ընտանիքի հանդեպ, բարեկեցիկ կյանք ապահովելու մղումն ու ընտանիքի հիմքը լինելու փաստը: Ամուսնու հենարան ունենալու այս զգացողությունից ծնված վստահությամբ առաջնորդվելով էլ՝ կինն ավելի կայուն ընտանիք կկառուցի: Տարիների ընթացքում ես չդադարեցի հիանալ Նուրիջանի խելացի, երկայնամիտ, աջակցող, արդար, ճշմարտախոս ու նվիրյալ տեսակով»:

Նուրիջանն էլ ժպիտով պատմում է, որ գրավել է Ինգայի մեկ հայացքով ու այդպես էլ շարունակում է ապրել. «Շատ եմ կարևորում, որ ղեկավար իրավիճակներում նա կարողանում է արագ կողմնորոշվել, նվիրված է մեր ընտանիքին, բարի է ու կամեցող»:

Ինգայի խոսքով՝ լինելով բնույթով աշխույժ ու ակտիվ մարդ, Նուրիջանից տարիների ընթացքում սովորել է լռել ճիշտ պահերին, լսել դիմացինին ու կարողանալ գալ փոխադարձ համաձայնության բոլոր տեսակի որոշումների կայացման ծանապարհին. «Պահ է լինում, երբ անհրաժեշտ է մեկ քայլ հետ անել, ու դա հաստատ ավելի

ճիշտ է, քան մի մեծ ցատկ առաջ գնալը, ինչը բազմաթիվ կոնֆլիկտային իրավիճակներ է ստեղծում: Իհարկե, կնոջ խաղաղարար դերն ու նշանակությունն ընտանիքում գիտակցում ես տարիների ընթացքում: Իմ դեպքում ես կարևորում եմ նաև աղջիկներ



րիս համար կնոջ ու մոր ճիշտ օրինակ լինելը»:

Զրուցակիցներս առանձնացնում են մի կարևոր հատկանիշ իրենց ընտանիքում: «Երկուսս էլ, լինելով բնույթով խռովկան, ի սկզբանե որոշել ենք՝ երբ տարբեր խնդիր-

ների պատճառով վիճում ենք, պիտի խոսել այդ մասին, չենդանալ, արագ հարթել ու անցնել առաջ, որ հանկարծ դա հետագայում մտավածք չտա: Դրա համար հիմա արդեն չենք վիճում, ինչը զարմացնում է մարդկանց»,- նկատում է Ինգան, իսկ Նուրիջանն էլ ավելացնում է՝ վեճերի պատճառներն իրականում արժանի չեն, որ իրենք անցնեն դրա միջով, ինչպես նաև կյանքն ավելի հետաքրքիր է համերաշխությամբ ու սիրո մեջ, քան կռվի: Այսքանից հետո զարմանալի չէ, որ Ինգայի համար ընտանիքը հեքիաթ է, որտեղ չկա «ես», այլ միայն «մենք», և այդ «մենք»-ից է կախված, թե հեքիաթը որքան բարի, լուսավոր ու գեղեցիկ կլինի:

Զրուցակիցներս նշում են, որ տարիների ընթացքում մնամել են միմյանց և իրար հասկանում են անգամ առանց խոսքերի. «Մենք գտել ենք սահմաններ, որոնցից դուրս չենք գալիս, բայց միևնույն ժամանակ մեկս մյուսին չենք սահմանափակում ոչ մի հարցում՝ լավ գիտակցելով միմյանց պարտականություններն ու իրավունքները»:

Լինելով գործույթ մարդիկ՝ նրանք կարողանում են ընտանեկան կյանքն ու աշխատանքային գործունեությունը լավագույնս համատեղել: Ինգան համոզված է՝ ցանկության դեպքում անկարելի բան չկա: Նվիրվածությունն աշխատանքին ու սերն ընտանիքի հանդեպ տալիս են լավագույն արդյունք. «Երեխաներիս ծնվելուց տարիներ անց ես հասկացա, որ միայն առօրյա կենցաղային գործերով ինձ լիարժեք չեն զգում, սկսում են կորցնել անհատականությունս: → Էջ 8

ԱՐԱՐՉԻ ԵՎ ԱՐԱՐԱԾԻ ՄԻԱԶՈՒԼՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՅՈՒՆ

«Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, եթե չուտեք մարդու Որդու Մարմինը և չընկեք Նրա Արյունը, ձեր մեջ կյանք չեք ունենա» (Հովհաննես 6:54):

Քրիստոնյայի կյանքի կարևորագույն նպատակն Արարչի հետ հաղորդակցության մեջ մնալն է, որի լավագույն և անփոխարինելի ճանապարհը եկեղեցիներում մատուցվող Սուրբ Պատարագի արարողությունն է, հրեթացս որի քրիստոնյան ականատեսն է դառնում իր Փրկչի երկրային կյանքի հետ կապված գործունեությանը, իսկ Սուրբ Հաղորդության ճաշակմամբ՝ միաձուլվում Տիրոջ՝ հոգու ողջ եությանը հաղորդակցվելով Նրա հետ:

Սուրբ Հաղորդությունը Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու խորհուրդներից մեկն է, հաստատվել է Հիսուս Քրիստոսի կողմից Վերջին ընթրիքի ժամանակ՝ 12 առաքյալների հետ զատկական սեղանի շուրջ նստած. «Եվ մինչ նրանք դեռ ուտում էին, Հիսուս հաց վերցրեց, օրհնեց ու կտրեց և տվեց աշակերտներին ու ասաց. «Առե՛ք, կերե՛ք, այս է իմ մարմինը»: Եվ բաժակ վերցնելով՝ գոհություն հայտնեց, տվեց նրանց ու ասաց. «Խմե՛ցե՛ք դրանից բոլորը, որովհետև այդ է մոր ուխտի իմ արյունը, որ թափվում է շատերի համար՝ իրենց մեղքերի թողության համար» (Մատթեոս 26:26-28):

Արդյո՞ք կարելի է պատկերացնել Սուրբ Պատարագի ընթացքում Քրիստոսի հետ միասին ճանապարհորդելուց ու Սուրբ Հաղորդության միջոցով Նրա Մարմնին միաձուլվելուց մեկ այլ ավելի փառահեղ հաղորդակցության հնարավորություն, որը պատգամվել է հենց Աստծու կողմից: Այս գիտակցումն ակամայից կուղղորդի քրիստոնյային ըստ պատշաճի մասնակցել Սուրբ Պատարագի արարողությանը և հատուկ պատրաստվածությամբ մոտենալ Սուրբ Հաղորդությանը: Սուրբ Հաղորդությանը մոտենալու համար կան մի շարք հայտնի կենսաբան պայմաններ, որոնցից

են մկրտված լինելը, ապաշխարելը և ծննդապատկությունը (միայն հղի կանայք, երեխաները և հիվանդները կարող են հաղորդվել առանց ծննդապատկության):

Հրաշափառ այս արարողության՝ Սուրբ Պատարագի մատուցումը, ինչպես և քրիստոնեական ցանկացած ուսմունք կան ավանդույթ հասկանալու համար պետք է



«Խորհրդավոր ընթրիք»
Ավետարան, 15-րդ դար

սկսել Աստվածաշնչում արձանագրված Աստծո խոսքի դիտարկումներից: Այսպիսով, Աստվածաշնչում արված ուսումնասիրությունների համաձայն, Վերջին ընթրիքն է դարձել Քրիստոսի եկեղեցու կարևորագույն արարողության՝ Սուրբ Պատարագի ծննդավայրը, իհարկե, մի շարք առանձնահատուկ շեշտադրումներով: Նախ հայտնի է, որ քրիստոնյաները Սուրբ Պատարագ էին մատուցում մինչև Վերջին ընթրիքը նկարագրող Աստվածաշնչի գրքերից որևէ մեկի գրվելը: Ընթրիքի ամենավաղ նկարագրությունը Պողոս առաքյալի կորնթացիներին

ուղղված նամակում է (Ա Կորնթացիս 11:23-26): Սուրբ Պողոսն այս նամակը գրել է մոտավորապես 53 կամ 54 թվականներին՝ Վերջին ընթրիքից ավելի քան քսան տարի անց: Ավետարանները գրվել են ավելի ուշ՝ մեկ տասնյակ կամ ավելի տարիներ անց: Տիրոջ Ընթրիքի չորս նկարագրությունները Մատթեոսի, Մարկոսի, Դուկասի և կորնթացիներին ուղղված նամակի մեջ նույնական չեն: Նրանք տարբերվում են էական մանրամասներով՝ արտացոլելով հեղինակների առանձնահատուկ շեշտադրումները: Բացի այդ, Նոր Կտակարանի գրությունները չեն պատմում Վերջին ընթրիքի մասին բոլոր մանրամասները: Նրանք իրականում շատ քիչ տեղեկություն են հաղորդում Վերջին ընթրիքի մասին և հատկապես քիչ տեղեկություն՝ Սուրբ Պատարագը մատուցելու կերպի մասին: Մատթեոսի, Մարկոսի և Դուկասի Ավետարանների և կորնթացիներին ուղղված նամակի ամբողջ տեղեկատվության դիտարկմամբ պարզվում է միայն այն, որ Հիսուս հաց ու գինի վերցրեց, շնորհակալություն հայտնեց, ապա այդ հացն ու գինին, Իր Մարմինն ու Արյունը հռչակելով՝ տվեց աշակերտներին, որպեսզի ճաշակեն, հետո պատվիրեց. «Այս արե՛ք իմ հիշատակի համար» (Մատթեոս 26:26-29, Դուկաս 26:19), այնուհետև շարական երգեցին ու զնացին: Այսինքն, ստացվում է, որ եթե Սուրբ Պատարագի արարողության ընթացքում բառացի կերպով իրականացնեն Նոր Կտակարանում արձանագրված միայն այս գործողությունները, ապա այն կտևեր ընդամենը հինգ րոպե, որը չափազանց կարճ կլիներ ներկայիս քրիստոնյային իր Տիրոջ երկրային կյանքի հետ ծանոթացնելու, Նրա հետ ճանապարհորդելու հնարավորությունը պարզապես և Սուրբ Հաղորդությանը մոտենալու կենսաբան հնարավորությունն ընձեռնելու համար: Եվ պատմության մեջ ոչ մի քրիստոնեական համայնք չի ունեցել Հաղորդության արարողություն, որը սահմանափակված է միայն մշյալ գործողություններով, քանզի այսպիսի փոքրածավալ

կարճատև արարողությունն իսկապես չի կարող արտացոլել նաև Հիսուսի գործողությունների և խոսքերի համադրվածությունը, որ իրականացվեց Վերնատանը՝ հրեթացս Նրա երկրային կյանքի վերջին գիշերվա:

Ուսումնասիրությունների համաձայն, Նոր Կտակարանի հեղինակները նախատեսած չեն եղել, որ Տիրոջ Ընթրիքի շուրջ իրենց կողմից արված նկարագրություններն ընկալվեն որպես մեխանիկական ընդօրինակման հրահանգ: Հեղինակների նպատակն էր հատկապես այս ծեսի աստվածաբանական նշանակության ընդգծումը, Արարչի կողմից արարածներին տրված փրկության հնարավորության շեշտադրումը:

Սուրբ Հաղորդության խորհուրդը Հիսուսի գոհաբերման՝ պատարագման խորհուրդն է: Այն Սուրբ Պատարագի արարողության բուն առաջնքն է, որի ժամանակ Ամենա Գառը՝ Հիսուս Քրիստոս, որպես հաշտության գոհ, խորհրդավոր կերպով պատարագվում է Սուրբ Սեղանի վրա՝ բաշխելով քրիստոնյաներին Իր Սուրբ Մարմինն ու Սուրբ Արյունը՝ քավություն և թողություն տալով նրանց մեղքերին: Սա քրիստոնյայի և Քրիստոսի միջև կենսական կապի ստեղծումն է, երբ մեղավորը հանդիպում է Քավչարարին, փրկվածը՝ Փրկչին:

Արդ, պատմական փաստերի գիտակցմամբ և բյուր հավատքով լեցուն սրտով անձն ուղղակի չի կարող չայցելել եկեղեցի և չմասնակցել Սուրբ Պատարագի արարողությանը, քանզի Աստծու հանդեպ տածած անսպառ սերն ու նվիրումն ինքնաբերական կերպով նրան կոչում մոտենալու Սուրբ Հաղորդությանը՝ որպես Քրիստոսին գեթ մեկ անգամ դիպչելու և Նրա ներկայությունը սեփական հոգում զգալու մեծագույն երազանքի իրականացման օրինյալ և փառահեղ աղոթական ճանապարհ:

Պատրաստեց
Լաուրա ԱՐԱՋԱՆՅԱՆԸ

ԽՈՐԱՆԱՀԱՏ՝ ՀԱՅՈՑ ՄԻՋՆԱԴԱՐԻ ՈԳԵՂԵՆ ԿԵՆՏՐՈՆԸ ՍԱՀՄԱՆԻՆ ՈՒ ՍԱՀՄԱՆԻՑ ՎԵՐ

...Տավուշի մարզի Չինարի գյուղից 2,5 կմ հյուսիս-արևելք ընկած ամրաշարձապատ սարի արևմտահայաց լանջին հառնում է միջնադարյան հոգևոր-մշակութային ժառանգության վկաներից մեկը՝ Խորանաշատի ավելի քան 800-ամյա վանական համալիրը։ 13-րդ դարի սկզբներին Վանական Վարդապետ Տավուշեցին (1181-1251 թթ.) այստեղ հիմնեց Խորանաշատի վանական համալիրը՝ Վահրամյանների իշխանատիրության կողմնակալ-հրամանատար Վահրամ Բ Գագեցու հովանավորությամբ։

Խորանաշատը իր պատմական նշանակությամբ միջնադարյան Հայաստանի հոգևոր-կրթամշակութային կենտրոններից է եղել։ Այս հնավանդ վանքը մի ժամանակ գտնվել է Հայաստանի սրտում, իսկ այսօր իր աշխարհագրական դիրքով հայտնվել է մեր Հայրենիքի սահմանին, մշտապես լինելով բնամուկ կրակի թիրախում, մեզ համար թե՛ հոգևոր, և թե՛ ֆիզիկական գոյության և պայքարի խորհուրդ ունի։ Այսօր բռնազավթված է Արցախը իր ղաղիվանքով, իր կմարատով ու պատմական կոթողներով, որոնք համաքրիստոնեական ժառանգություն են և վտանգված են նրանց գոյությունը։ Եվ Խորանաշատ վանական համալիրը պայքարի խորհուրդ ունի մի մեծ, որ այստեղ հենց այս սահմանում է գծվելու Արցախը վերադարձնելու և պատմական արդարությունը հաստատելու մեր ուղին։

«Արևելից կողմանք հայոց»։ այսպես է եղել Արցախ և Ուտիք նահանգների միասնական անվանումը միջնադարում։ Այս անվանումը հիշատակել են նաև մեր հետագա պատմաբաններն ու հայագետները։ Որքան էլ պատմությունը խմբագրեն ու եղծա-

նեն, այստեղ՝ Արցախ-Ուտիք աշխարհի գրչության կենտրոններում ծնունդ առած ձեռագրերը շարունակելու են լինել կենդանի վկաները, որ այս օրը միշտ կրել է հայկական քաղաքակրթության կնիքը։

Այստեղ՝ Խորանաշատում, մեծ մատենադարան է եղել, գրվել, կազմվել, խմբագրվել ու արտագրվել են բազում մատյաններ, կրոնական բովանդա-

նադրեր։ Վանական վարդապետի մի շարք երկեր («Մեկնութիւն Հոբայ», «Հարցմունք և պատասխանիք» և այլն) որպես դասագիրք կամ համառոտ ուղեցույց են ծառայել աշակերտների համար։ Սաներից շատերը ուսումնառության տարիներին զբաղվել են գիտությամբ։ Շրջանավարտները ստացել են վարդապետական աստիճան և զբաղվել ինքնուրույն գործունեությամբ։ Վարդապետարանի սաներից 13-րդ դարի հայ եկեղեցու և մշակույթի նշանավոր գործիչ Կիրակոս Փանծակեցին գրել է. «Գալիս էին առ նա ուսման աղագաւ ոչ միայն վարդապետական բանի, այլ ամենայն կեանք նորա և շարժումն անգիր օրենք էին տեսողացն»։ Այստեղ ուսանել են Վարդան Արևելցին, Գրիգոր Ալկերցին, Ստեփանոս Աղթամարցին, Առաքելը, Արտազ զավառի թեմակալ, դավանաբանական հարցերում մեծ հեղինակություն վայելող Հովսեփ վարդապետը, հաջենի քաղաքական կյանքում ակնառու գործիչ Մարկոս վարդապետը, ակնավոր փիլիսոփա Սոսթենեսը, հայսմավուրբային ժողովածուների խմբագիր Ներքին հաջենի արքեպիսկոպոս Իսրայելը, Գրիգոր Աղթամարցին և ուրիշներ։

Վանական Վարդապետի ամենից հռչակավոր և բեղմնավոր սանն ու վարդապետարանի առաջին շրջանավարտներից էր Վարդան Արևելցին, ում միջնադարյան աղբյուրներում մեծաբեղ են «տիեզերալույս վարդապետ», «եռամեծ», «հոգիապայծառ սուրբ հայր» պատվանուններով։ Մխիթար Գոշի մոտ կրթություն ստանալուց հետո Վարդան Արևելցին եկել է Խարանաշատ և աշակերտել Վանական Վարդապետին՝ նրանից ստանալով վարդապետական աստիճան և 1235

հազարեր։ Վանական վարդապետի մի շարք երկեր («Մեկնութիւն Հոբայ», «Հարցմունք և պատասխանիք» և այլն) որպես դասագիրք կամ համառոտ ուղեցույց են ծառայել աշակերտների համար։ Սաներից շատերը ուսումնառության տարիներին զբաղվել են գիտությամբ։ Շրջանավարտները ստացել են վարդապետական աստիճան և զբաղվել ինքնուրույն գործունեությամբ։ Վարդապետարանի սաներից 13-րդ դարի հայ եկեղեցու և մշակույթի նշանավոր գործիչ Կիրակոս Փանծակեցին գրել է. «Գալիս էին առ նա ուսման աղագաւ ոչ միայն վարդապետական բանի, այլ ամենայն կեանք նորա և շարժումն անգիր օրենք էին տեսողացն»։ Այստեղ ուսանել են Վարդան Արևելցին, Գրիգոր Ալկերցին, Ստեփանոս Աղթամարցին, Առաքելը, Արտազ զավառի թեմակալ, դավանաբանական հարցերում մեծ հեղինակություն վայելող Հովսեփ վարդապետը, հաջենի քաղաքական կյանքում ակնառու գործիչ Մարկոս վարդապետը, ակնավոր փիլիսոփա Սոսթենեսը, հայսմավուրբային ժողովածուների խմբագիր Ներքին հաջենի արքեպիսկոպոս Իսրայելը, Գրիգոր Աղթամարցին և ուրիշներ։

Վանական Վարդապետի ամենից հռչակավոր և բեղմնավոր սանն ու վարդապետարանի առաջին շրջանավարտներից էր Վարդան Արևելցին, ում միջնադարյան աղբյուրներում մեծաբեղ են «տիեզերալույս վարդապետ», «եռամեծ», «հոգիապայծառ սուրբ հայր» պատվանուններով։ Մխիթար Գոշի մոտ կրթություն ստանալուց հետո Վարդան Արևելցին եկել է Խարանաշատ և աշակերտել Վանական Վարդապետին՝ նրանից ստանալով վարդապետական աստիճան և 1235

թվականից զբաղվել է գիտական-մանկավարժական գործունեությամբ, ապա բացել դպրոցներ՝ սկզբում Կայենո բերդի Ս. Անդրեի վանքում, ապա՝ Խոր Վիրապում՝ շարունակելով իր ուսուցչապետի ավանդները։ Այսպես են եռամեծ Վարդապետի դպրոցը փոխանցել իր հռչակավոր սաները։ Ուշագրավ է աշխատության հեղինակի Թամարա Մինասյանի այս դիտարկումը. «Թեպետ ուղղակի վկայություն չունենք, բայց կարծում ենք, որ Հովհաննես Տավուշեցու դպրոցը ուսուցչի մահից հետո այս կամ այն ձևով պետք է շարունակեր իր գործունեությունը՝ բավարար հիմքեր ստեղծելով գրչության մեկ այլ կենտրոնի, այս դեպքում Խորանաշատի դպրոցի ստեղծման համար։ Այս հետևությունն ենք համոզված՝ նկատի ունենալով, որ Տավուշ-Նոր Գետիկավանք-Խորանաշատ ուսումնական կենտրոններն իրար հետ կապված են ուսուցչապետների և աշակերտների փոխհարաբերություններով ու նրանց գործունեությամբ...»։

Դեռևս 2022 թ. մայիսի 28-ից Հանրապետության տոնը հռչակվել է Խորանաշատի ուխտի օր։ Այդ ուխտի ճանապարհով արժանի պիտի լինենք մեր մեծ նախնիներին, ովքեր հնավանդ վանքերի սրբազան պատերի ներսում ստեղծեցին մեր հոգևոր ժառանգությունը։ Մենք՝ այդ ժառանգության կրողներ, մեր այսօրվա գոյապայքարին պարտվելու իրավունք չունենք... Այստեղ է այն սահմանը, որտեղ հենց այսօրվանից գծվում են մեր Հոգևոր Հայրենիքի սահմանները, որտեղ Արցախը թերթված է չէ մեր ազգային հոգեգիտակցական դաշտում...

Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ

«ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ» ԷՊՈՍԸ

Սկիզբը՝ թիվ 6-ում

Կատմողները էպոսի վերնագիրը դրել են «Սասնա փախկաններ», «Սասնա տուն», «Ջուջանց տուն», այսինքն՝ մեծերի, ավագների տուն (տարիքով և դիրքով ավագների), «Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ», «Դավիթ և Մհեր», «Դավթի պատմություն» և այլն։ «Սասնա ծռեր» ընդհանուր վերնագիրը Մ. Աբեղյանին է։ Նա գրում է. «Սասունցի Դավիթ» կամ «Մհերի դուռ» և «Դավիթ և Մհեր» վերնագրերն ամբողջապես չի արտահայտում վեպի բովանդակությունը, որովհետև բացի Դավթից և Մհերից վեպի մեջ կան և ուրիշ գործող գլխավոր հերոսներ (Սանասար, Ասիմեյից և ուրիշներ)։ Այդ ի նկատի ունենալով մենք ավելի հարմար ենք գտնում այդ վեպը մի ընդհանուր վերնագրով անվանել «Սասնա ծռեր», որ նշանակում է «Սասունի Գծեր»։ Այդ կոչումը գեղեցիկ ու արտահայտիչ և միանգամայն ժողովրդական է, որովհետև Սասնա ծռեր է վեպի մեջ գործող յուրաքանչյուր հերոս, և մինչև այսօր էլ ժողովրդի բերանում գործածական է «Սասնա ծռեր» կոչումը վեպի ամեն մի հերոսի համար և ժողովուրդն այդ վեպը «Սասնայ ծռեր» է անվա-

նում։ «Սասնա ծռեր» կոչումը կա և Սրվանձոյանի վարիանտում։ Այսպես, 1892 թվականին մեր ժողովրդական էպոսը ընդհանուր անվամբ կոչվում է «Սասնա ծռեր»։ Հետագայում համահավաք



բնագիրը կազմելիս կազմողները փորձել են նոր վերնագիր ընտրել. «...Սասունցի Դավիթը վեպի մի մասն է, և ամենից կարևոր մասը, որը և ժողովրդական վեպի լավ մասն է ու մշակված է ավելի լավ, բայց Դավիթը մեր հերոսնե-

րից մեկն է։ Մեր վեպն ընդգրկում է չորս հերոսների կյանքը։ Եթե մենք վեպի միջին մասը հրատարակելու լինեինք, այսինքն միայն Սասունցի Դավիթ կտորը, այդ ժամանակ, բնական է, կընեինք «Սա-

նա ծռեր» կամ «Սասունցի Դավիթ»։ Եթե մենք վեպի միջին մասը հրատարակելու լինեինք, այսինքն միայն Սասունցի Դավիթ կտորը, այդ ժամանակ, բնական է, կընեինք «Սա-

նա ծռեր» կամ «Սասունցի Դավիթ»։ Եթե մենք վեպի միջին մասը հրատարակելու լինեինք, այսինքն միայն Սասունցի Դավիթ կտորը, այդ ժամանակ, բնական է, կընեինք «Սա-

նա ծռեր» կամ «Սասունցի Դավիթ»։ Եթե մենք վեպի միջին մասը հրատարակելու լինեինք, այսինքն միայն Սասունցի Դավիթ կտորը, այդ ժամանակ, բնական է, կընեինք «Սա-

նա ծռեր» կամ «Սասունցի Դավիթ»։ Եթե մենք վեպի միջին մասը հրատարակելու լինեինք, այսինքն միայն Սասունցի Դավիթ կտորը, այդ ժամանակ, բնական է, կընեինք «Սա-

Պատրաստեց
ԱՆՆԱ ՊՈՂՈՍՅԱՆԸ


ՀԱՅ ՀՈԳՈՒ ՈՒ ՄՏՔԻ ԳՐԱՅԻՆ ԶԵՏԵՂԱՐԱՆՆԵՐԻՑ ՄԵԿԸ

1944-ին, երբ աշխարհի հզորները, տասնյակ միլիոնավորների արյամբ երկրագունդը ոռոգելով, իրար հետ հաշիվներ էին մաքրում, հայ ժողովուրդը ամսագիր էր հիմնադրում, որ պիտի դառնար Հայ եկեղեցու յուրօրինակ տարեգիրքն ու հայ մտքի երախայրու զետեղարաններից մեկը: Այն պիտի փոխարիներ իր մեծ նախորդին «Արարատ»-ին, ու պիտի անցներ նույն քան փառահեղ ուղի՝ հասնելով մինչև մեր օրերը: Կրոնական և հայագիտական այդ ամսագիրը, որ լույս աշխարհ էր գալիս իբրև պաշտոնական ամսագիր Ամենայն Հայոց Կաթողիկոսության Մայր Աթոռ Սրբոց Էջմիածնի՝ Գևորգ արքեպիսկոպոս Չորեքյանի (Գևորգ Զ Չորեքյան Ամենայն Հայոց Կաթողիկոս) նախաձեռնությամբ, ստանում է մեր ազգի գերագույն գլխավոր սրբավայրի անվանումը՝ Էջմիածին, խմբագիր է նշանակվում Առաքել Առաքելյանը:

Հայ եկեղեցու պաշտոնական պարբերականը սկզբնական շրջանում կրոնական բնույթի նյութեր գրեթե չի տպագրում. խմբագրությունն իր աշխատանքները ստիպված էր կազմակերպել ժամանակի քաղաքական դրվածքին ու գրաքննական պահանջներին համապատասխան: 1950-ական թթ. սառը հոսանքների որոշ չափով հեռացման շնորհիվ նպաստավոր պայմաններ են ստեղծվում ամսագրի բուն առաքելությունն իրականացնելու համար:

Խմբագրական աշխատանքներին պատշաճ տեսք տալու նպատակով 1956 թ. Վազգեն Ա Հայրապետի տնօրինությամբ խմբագրությունը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում հատկացվում է առանձին գրասենյակ, իսկ պարբերականի տպագրությունն անխափան իրականացնելու համար 1961-ի հոկտեմբերի 15-ին վերաբացվում է Մայր Աթոռի տպարանը. այդ թվականից ամսագիրը լույս է տեսնում հոգևոր մայրաքաղաքում, մինչ այդ տպագրվում էր Երևանում:

Կրոնագիտական, հայագիտական պարբերականի գիտականությունը նոր մակարդակի բարձրացնելու, ինչպես և հրատարակությունն առավել արդյունավոր դարձնելու տեսլականով 1965 թ. Վազգեն Վեհափառի նախաձեռնությամբ կազմավորվում է խմբագրական խորհուրդ: Ինչպես նշված



է «Էջմիածին» ամսագրի 1975 թ. Բ համարում, երանելի Վեհափառի օրով «Էջմիածին» ամսագրի խմբագրությունը դառնում է նաև Մայր Աթոռի հրատարակչականը, ի պաշտոնե և ի կոչմանե:

Հայ եկեղեցու անցուղարձ, հայագիտության ասպարեզում իրականացվող արարումներ. ահա ընդհանուր առմամբ սա է՝ իր ողջ բազմազանությամբ, տեղ գտնում հայերիս հոգևոր մայրաքաղաքում պարբերակաբար ծնունդ առնող գրային

զետեղարանում՝ Հայոց Հայրապետների արտասահմանյան ուղևորություններ, կոնգրեսներ, շրջաբերականներ, քարոզներ, ճառեր, ելույթներ, նամակներ, թեմերի զեկույցներ, գրություններ (կաթողիկոսի ու ազգային մարմինների, առաջնորդների ու թեմական եկեղեցական խորհուրդների, կաթողիկոսի ու քույր եկեղեցիների առաջնորդների միջև և այլն), Մայր Աթոռի դիվանատան հաղորդագրություններ՝ հոգևոր ճեմարանի, եկեղեցական ժողովների, բարձրաստիճան հոգևորականների հանդիպումների, քահանայական ձեռնադրումների վերաբերյալ, խրատներ, սուրբգրային նյութեր, Մայր Աթոռի, Սփյուռքի ու ներքին թեմերի եկեղեցական կյանքի համակողմանի ներկայացում, անդրադարձներ միջեկեղեցական, միջազգային տարաբնույթ հարցերի, հայագիտության բոլոր ճյուղերին վերաբերող գիտական հրապարակումներ:

Իրենց աշխատակցություններով Էջմիածնական պարբերականին առնչվել են Հայրենիքի ու Սփյուռքի բազում-բազմաթիվ հոգևոր այրեր ու գիտական աշխատողներ: «Էջմիածին»-ի էջերով է իր մտքի երախայրին իբրև անգին ընծա գիտական համայնքին մատուցել հայագիտության ու Հայ եկեղեցու մի ամբողջ գազաթախումը՝ Հրաչյա Աճառյան, Ստեփան Մալխասյանց, Արշակ Ալպոյաճյան, Երվանդ Շահազիզ, Գարեգին Լևոնյան, Լևոն Մելիքսեթ-Քեյ, Կարո Ղաֆադարյան, Երվանդ Տեր-Մինասյան, Գևորգ Զ Չորեքյան Կաթողիկոս, Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Ա Յովսեփյանց Կաթողիկոս, Վազգեն Եպիսկոպոս Պալճյան (Ամենայն Հայոց Վազգեն Ա Կաթողիկոս) և այլք:

1956 թ. սկսած «Էջմիածին» ամսագրի խմբագրությունն է պատրաստել և հրատարակել կրոնական, եկեղեցագիտական, ճանապարհորդագրական, պատմաբանասիրական բնույթի մի քանի տասնյակ

ամուն գիրք: Հրապարակ է հանել նաև մի շարք արխիվային նյութեր, լույս ընծայել հարուստ հուշագրություններ: Ամսագրի էջերում կարելի է տեսնել Մայր Աթոռում նոր ստացված ձեռագրերի գիտական ցուցակը, նաև այլ ձեռագրերի համառոտ նկարագրություններ: Արխիվային նյութերի, հուշերի, նամակների հրապարակումներ էլ են եղել: «Էջմիածին»-ի միջոցով հայագիտական համրության սեփականությունն են դարձել մեր միջնադարյան մատենագիրների մի շարք անտիպ գործեր: Պարբերականի ուղադրության կենտրոնում է նաև հայ միջնադարյան հուշարձանների արձանագրությունների հրատարակումը: Հանդեսում թարգմանաբար զետեղվել են նաև այլ լեզուներով գրված, սակայն հայ մատենագրությանը սերտորեն առնչվող գործեր:

«Էջմիածին»-ը չի անտեսել նաև իր փառահեղ նախորդին. 1968 թ. լույս է տեսել «Արարատ»-ի հարյուրամյակին նվիրված «Էջմիածին» ամսագրի բացառիկ, ճոխաբովանդակ համարը: Հորեքյար պարբերականում 1968-1970 թթ. և 1973-1974 թթ. տպագրվել են «Արարատ» ամսագրի 50 տարվա և «Էջմիածին» ամսագրի 30 տարվա նյութերի մանրակրկիտ մատենագիտությունները: Լույս են ընծայվել նաև հայ և օտար հայագետների կյանքին ու գիտական ժառանգությանը նվիրված հոդվածներ, նրանց հայագիտական գործերի մատենագիտությունները: Ամսագրում տեղ գտած մի շարք հոդվածաշարեր հրատարակվել են իբրև առանձնատիպ:

Հայ եկեղեցու ու հայ ժողովրդի լավ ու վատ օրերի, տագնապների ու խիզախումների, կորուստների ու ձեռքբերումների ականատեսն ու վկան է եղել հորեքյար պարբերականը, նաև անդրադարձողն ու մասնակիցը համաքրիատոնական գարգացումներին:

→ էջ 8

ԽՈՍՈՒՄ ԵՆ ՆԱՄԱԿՆԵՐԸ

Սկիզբը՝ 6-ում

ՍՓՅՈՒՆԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՊԻ ԿՈՄԻՏԵԻ ԱՐՎԵՍՏԻ ԲԱԺԻ ՎԱՐԻՉ, ԲԱՆԱՍՏԵՂՈՒԴԻ ՄԱՐԻ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ԻՏԱԼԱՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵՐԱՐ, ՀԲԸՄ ԻՏԱԼԻԱՅԻ ՄԱՍՆԱԾՅՈՒՂԻ ԱՏԵՆԱՊԵՏ ՍՏԵՓԱՆ ՍՐԱՊՅԱՆԻ

30 մայիս 1967թ.

ՍՏԵՓԱՆ ՍՐԱՊՅԱՆ

Միլանո

Հարգելի պրն. Սրապյան
Մեր կոմիտեն նամակ է ստացել իտալահայ նկարիչ Լևոն Արզումանյանից: Նամակում նա շատ մռայլ գույներով նկարագրում է իր կյանքը և ցանկություն է հայտնում իր աշխատանքները ուղարկել հայրենիք: Այժմ նա հառաջացած տարիքի մեջ է և հավանորեն նյութական աննպաստ պայմաններում:

Շատ կխնդրեմք Ձեզ՝ որպես հայրենասեր բարեկամի, ծանոթ ընկերների միջոցով գտնել այդ մարդուն, տեսնել աշխատանքները: Եթե ուղարկության արժանի գործեր են, մտածենք Հայաստան փոխադրելու մասին և աշխատենք որևէ կերպ օգնել նկարչին:

Հարգանքներով

ԱՐՎԵՍՏԻ ԲԱԺԻ ՎԱՐԻՉ

Մարո Մարգարյան

ՀԱՍ. 420, g.89, q.47, p.3, տպագիր բնագիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՄԱՐԶԻ ՏՆՕՐԵՆ ՀԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՆԿԱՐԻՉ ԷՂՈՒՐԻ ԻՍԱԲԵԿՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ

ԻՏԱԼԱՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵՐԱՐ, ՀԲԸՄ ԻՏԱԼԻԱՅԻ ՄԱՍՆԱԾՅՈՒՂԻ ԱՏԵՆԱՊԵՏ ՍՏԵՓԱՆ ՍՐԱՊՅԱՆԻ

3 փետրվար 1972թ.
Երևան

ՊՐՆ. Ս.ՍՐԱՊՅԱՆ

Միլան

Բ

9 հունվար 1945թ.

ՄԵԾԱՐԳՈ ՊԱՐՈՆ

Ռուբեն Ջառյանից ուրախությամբ ստացանք պարոն Ս. Գազազյանի կողմից Հայաստանի պետական պատկերասրահին նվիրաբերած Հովհաննես Այվազովսկու մեկ ծովանկարը (տոնդո), որը իսկական հայրենասիրության մի զեղեցիկ արտահայտություն է: Հայրենի մշակույթին ձեռնայելու Ձեր ազնիվ ջանքերը արժանի են ամեն գովասանքի:

Խորին շնորհակալություն
Ամենալավ ցանկություններով և հարգանքներով

Պրոֆ. Է.ԻՍԱԲԵԿՅԱՆ
Հայաստանի պետական
պատկերասրահի տնօրեն,
ՀԱՅԻ ԺՈՂ.ՆԿԱՐԻՉ

ՀԱՍ. 420, g.89, q.40, տպագիր, բնագիր

ՆԿԱՐԻՉ ՕՆԵԿԻ ՎԿԵՏԻՍՅԱՆԻ
ՆԱՄԱԿՆԵՐԸ Ս.ԱՊՏԱԼՅԱՆԻՆ

5 նոյեմբեր 1945թ.

Ա

Սիրելի Պ.Ս.Ապտալեան,
ժամանակին ստացած եմ Ձեր երկու նամակները ինչպես նաև քերթածներուն հաւաքածուն: Կը գրեմ Ձեզի իմացնելու համար թէ այս միջոցիս ուրուագիծեր կը պատրաստիմ Ձեր գրքին համար և թէ քանի մը օրէն երկար նամակով մը Ձեզի պիտի ղրկեմ: Յուսախաբ չընելու համար Ձեզ, իմանկույնէ ըսիմ թէ շատ պարզ գծագրութիւններու միայն կտայի ձեռնարկել, Ձեր տուած ժամանակին կարծութեան, իմ ալ տրամադրելի ժամանակիս սակաւութեան պատճառով, նկատի ունենալով միևնոյն ատեն տեղույր յղագրական ոչ կատարեալ միջոցները:

Ձերդ սիրով

ՕՆԵԿԻ ՎԿԵՏԻՍԵԱՆ
ԳԱԹ, Վահե Վահյան – 224, p.1, ձեռագիր, բնագիր

Սիրելի Պ.Ս.Ապտալեան,

Յանկարծակի որոշումով մը երկու շաբաթ առաջ մեկնեցայ Գահիրէն վերին Եգիպտոս այցելութեան համար: Ստիպուեցայ հետևաբար Ձեր գործն ալ կիսաւարտ ձգել: Քանի մը օրէն սակայն կը վերադառնամ և առաջին գործս պիտի ըլլայ զբաղիլ Ձեր գծագրութիւններով զոր շուտով կը ղրկեմ: Խնդրեմ ներողամիտ եղէք այս անակնկալ ճամբորդութեան պատճառով եղած ուշացումին համար: Կը յուսամ թէ մեծ անպատեհութեանց պատճառաւ եղած չեմ ըլլար:

Սիրալիր բարևներով
Ձերդ
ՕՆԵԿԻ ՎԿԵՏԻՍԵԱՆ

ԳԱԹ, Վ. Վահյան – 224, p.3, ձեռագիր, բնագիր

ՀԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՆԿԱՐԻՉ ԳՐԻԳՈՐ ԽԱՆՅԱՆԻ ԵՐԿՈՒ ՆԱՄԱԿԸ ԻՏԱԼԱՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵՐԱՐ, ՀԲԸՄ ԻՏԱԼԻԱՅԻ ՄԱՍՆԱԾՅՈՒՂԻ ԱՏԵՆԱՊԵՏ ՍՏԵՓԱՆ ՍՐԱՊՅԱՆԻ

Բ

29 փետրվար 1972թ.
Երևան

Սիրելի Ստեփան!!!

...Սիրելի Ստեփան! Այո, Ձեզ շատ հաճախ ենք հիշում և կարոտել ենք շատ, բայց ինչ արած, մենք այդքան հաճախակի չենք կարող գալ, իսկ դուք չեք գալիս, ուրեմն մնում է հիշել և բավարարվել միայն հիշողություններով: Իսկ մեր անցեալ տարվա հուլիսին Ձեռնայի հետ Ձեր ընկերակցությամբ և Ձեր հարկի տակ անմոռանալի են և շատ հարագատ:

...Վերջացնելով իմ այս կարճ նամակը սիրելի Ստեփան, ընդունիր իմ եղբայրական ջերմ համբոյրը:

Միշտ Ձեր Գրիգոր

Հ.Գ. – Բարևներ մեր բոլոր բարեկամներին

ՀԱՍ. 420.g.89, q.41, p.5 ձեռագիր, բնագիր

Պատրաստեց Սիլվա ՍՈՒՔԻԱՅԱՆԸ

ԶՐՈՒՅԱՐԱՆ

«Ձգուշացե՛ք, չլինի մերժեք Նրան, ով խոսում է» (Եբրայեցիս 12.25):

Տարիքս արդեն հասել է այնտեղ, ուր ես իմ ամենատխուր երազանքի մեջ անգամ չէի կարող ծրագրել: Արդեն հատել եմ սահմանը, որ սովորաբար անցնում է աշխույժ կյանք և մի տեսակ «ավելորդ կյանք» պիտակավորում ունեցող սահմանագիծը: Եթե ինձ ասեին, որ իմ տնից այգու զրուցարան ճանապարհը, որ ընդամենը 500 մետր է, մեկ ժամից արագ հնարավոր չէ անցնել, ես ասողին տարօրինակ մարդ անվանելու փոխարեն ինքս անհավասարակ չիռ վիճակում կհայտնվեի: Ցավալի է, բայց վերջերս այդ ճամփեն մեկ ժամից շուտ անցնել չի ստացվում:

Զրուցարանում ամեն մեկս կյանքի զարմանալի մի ճանապարհ անցած մարդիկ ենք: Խաղերին զուգահեռ երբեմն իրար պատմում ենք մեր ճամփեի երանելի շրջադարձային դեպքերից ու փորձում ենք ինքներս մեզ համոզել, թե դեռ առջևում պահված մի աշխարհ կյանք կա: Ի՞նչ է եղել որ: Իրականում անկեղծության պահերին նայում ենք իրար երեսի ու մտածում, որ Աստծո դատաստանի օրը ամենամոտ բլրի հետևում է: Վայ թե չհասցնեմ ամեն բան շտկել, ու օրերից մի օր ձեռքիս այս մի կարևոր ձեռնարկը սկսի կարոտել ինձ:

Մի օր շախմատի հերթական քայլիս վրա մտածելու ժամանակ միտքս «ծովեց»: Աստծո ձայնը հստակ լսելու կարողության փափագ ծնվեց մեջս: Առաջալի «Չմերժեք ձեզ խոսողին» իրահանգը ենթադրել է տալիս, թե այդ ձայնը հստակ լսելի է յուրաքանչյուրին: Եթե այդպես է, ուրեմն այդ ձայնը շատ պարզ պետք է լինի, զարմանալիորեն պարզ:

Ստացվում է՝ այդ ձայնը բարին, արդարն ու ճշմարիտը գործելու հրահանգն է, որ մարդու մտքում է ծագում: Տերն այնպես է հետո խոսում, ասես զրուցարանում դիմացդ նստած ընկերդ լինի: Չի հանդիմանում, մեղմ խոսում է. «Երդվեցի, որ չբարկանամ քո վրա ու չհանդիմանեմ» (Եսայի 54.9), խոսում է կատարյալ նվիրումով. «Նա մեր բոլոր գործերն իր ձեռքով կատարեց» (Եսայի 26.12):


«Հիսուս, ում մեջ բնակվում է Աստվածության լեցունությունը» (Կողոսացիս 2.9), Ինքն առանց մեղքի անցավ ճանապարհը, որ մարդուն դրախտ պիտի վերադարձնե: Նրա միջոցով Աստված ամենքին հաշտեցրեց Իր հետ Խաչի վրա բափած Իր Արյունով (Կողոսացիս 1.20):

Մի փոքր առաջանալը անմիջապես փաստում է, որ Աստված մարդու կյանքին հաճախակի խոսքով միջամտելու անհրաժեշտություն չունի էլ: Նա Հիսուսի անվան մկրտությանը առավելագույնն է կատարել. «Իմ Հոգին ձեր մեջ պիտի դնեմ ու դուք իմ օրենքներին մեջ պիտի քայլեք...» (Եզեկիել 36.27)

Օրենքն իր մեջ սքանչելի հոգի ունի, որ Առաքյալը հրաշալի է մատուցում: «Եթե մեկը գիտի, որն է բարին և չի գործում, այդ մեղք է նրա համար (Հակոբ 4.17), և դարձյալ. «Ինչո՞ւ չես ինքդ նեղություն կրում, այլ եղբորդ ես նեղություն տալիս» (Ա Կորնթացիս 6.7-8):

Գլուխդ բարձրացրու, Աստծո ճանապարհին հետևիր, Նրա զորավոր Խոսքի արածը տես: Իրավասու չէ՞ հանդիմանելու. «Քեզ համար ուրիշ ինչ պիտի անեի, որ չեմ կատարել» (Եսայի 5.4): Սրա համար է Առաքյալը զգուշացնում. «... չլինի մերժեք ձեզ խոսողին» (Եբրայեցիս 12.25):

Իրիկուն էր, ընկերներով լավ տրամադրությամբ բաժանվեցինք: Առջևում դժվարանցանքի 500 մետր ճամփա կար: Այն ամեն գնով պետք է հաղթահարվի: Ճամփի կեսին հոգնեցի: Մի



նստարանի եզրին իմ տարիքի մեկը նստած էր մտքերի հետ: Ես էլ մյուս ծայրին նստեցի: «Տեր ողորմյա»-իս հատիկները քաշում եմ ու շնչառությունս կարգավորում: Նախշուն թերթիկները ձեռքներին երկու կին մոտեցան հարևանիս ու թերթիկը մեկնելով՝ սկսեցին խոսել: Հարևանս հոգնած էր և չէր ցանկանում նրանց լսել: Բարձր տրամադրությունս դեռ ինձ չէր լքել: Մտքիս մեջ ասացի. «Արի ես բարի մարդուն ազատեմ այս կանանց խոսակցությունից»:

- Եղ ի՞նչ նախշուն թերթեր են: Ինձ էլ կտա՞ք դրանցից:

Կանայք խոսքս լսելուն պես հարևանիս թողեցին ու ինձ մոտեցան: Ես լավ գիտեի, որ նրանց թերթիկը ստերի շտեմարան է, և նրանց մեկնած թերթիկին ուշադրություն չդարձրի:

-Եթե սա ճշմարտություն է Աստծո մասին, ուրեմն Խաչի փրկության խորհրդի մասին է, ճիշտ եմ,- միամտացա ես: Կանանցից մեկը, որ մի փոքր հետ էր կանգնած և թվում է ավելի զուսպ էր, անմիջապես պատասխանեց:

-Այ մարդ, գզվեցի՞ր, Խաչը սպանության գործիք է: Աստծո Որդուն Խաչի վրա սպանեցին: Խաչի փրկության խորհուրդը ո՞րն է:

- Ես ճշմարտությունը լավ չգիտեմ, բայց հիշում եմ, որ Առաքյալն ասում է. «Քրիստոսի հետ Խաչը բարձրացա և հիմա կենդանի եմ...» (Գաղատացիս 2.20), իսկ դու ասում ես՝ Խաչի վրա սպանեցին: Եղ ո՞նց կլինի, որ քո խոսքը հակասում է Առաքյալին:

Կանայք կարծես իրար խառնվեցին: Նրանցից մեկը քաշեց ընկերուհու թևից:

- Աղջի, արի՛, արի՛: Վայ թե սա մեզ ձեռ ա առնում:

Կանայք մի քանի քայլ հեռացել էին, երբ ձայնեցի նրանց հետևից:

-Բա Տերն ինչո՞ւ է ասում. «Ո՞վ ուզում է ինձ աշակերտել, թող իր Խաչը վերցնի և ինձ հետևի...» (Մատթեոս 16.24):

Կանայք շտապեցին հեռանալ: Աչքս մի պահ հարևանիս ընկավ: Դեմքի տրտմությունը մեղմ ժպիտով էր

փոխարինվել: Նա մի փոքր իմ կողմ շարժվեց, ձեռքը դրեց ուսիս:

-Աստված օրհնի, եղբայր: Փրկեցիր աներես ճանճերից:

Դուք ինձանից լավ կհասկանա՞ք՝ ինչ արժեք կարող է ունենալ իմ կարգավիճակում եղող մեկի համար Աստծո օրհնությունը: Ես, ախր, իմ 500 մետր ճանապարհի կեսն էլ չեմ անցել: Չնայած դա էղբան էլ կարևոր չէ: Կարևորը նա է, որ այսօր Աստծո այգուց մի երկու մոլախոտ պոկելու շնորհ ստացա: Լավ է՝ այգու ծաղիկներին չեմ նեղի:

Այնպես մաքուր, այնպես անուշ է նրանց բույրը...

Արամայիս ՇԻՄԱՆՅԱՆ



ՆՈՒՐԻՋԱՆՆ ՈՒ ԻՆԳԱՆ...

Էջ 5 ←

Ուստի որոշեցի կրկին աշխատել, որ էներգիա և գիտելիքներս ճիշտ ուղղորդվեն»:

Երբ գրույցի ընթացքում հարց ծագեց, թե զույգերն ինչու են անհաջողության մատնվում, Նուրիջանը բացատրեց, որ մարդիկ ամուսնանում են՝ առանց այդ քայլին պատրաստ լինելու, առանց խորապես ընկալելու շատ երևույթներ՝ սկսած միմյանց հետ համաձայնության գալուց, իրար գիշելուց, մեկը մյուսին հասկանալուց և այլն. «Երիտասարդները հնարավոր է, որ անգամ սիրեն իրար, բայց սեփական փառամոլության, սեփական եսն առաջ տանելու համար ոտնատակ տան իրենց զգացմունքները: Այդ պատճառով պիտի գործեն նրանց համատեղ կյանքին պատրաստող համապատասխան կառույցներ»:

Իսկ ահա Ինգան կարծում է, որ ընտանիքներն ամեն դեպքում անհաջողության են մատնվում սիրո պակասից. «Երբ գիտակցված ու սիրելի են ընտանիք կազմում, զույգը դառնում է պատասխանատու մեկը մյուսի համար, ու այդ ժամանակ արդեն հաջողությունն ինքնուրույն զգալի է: Եթե կա նվիրվածություն, համառ աշխատանք, փոխադարձ հարգանք, մնացածը ժամանակի ընթացքում կարգավորվում է: Բայց եթե զույգն ամուսնանում է շահադիտական նպատակներով, արդյունքը միփթաբական չի լինում»:

Հետաքրքիր էր նաև ծանոթանալ մեր զրուցակիցների երազանքներին: «Իմ երազանքներից են, որ բոլորս առողջ լինեք, ընտանիքիս անդամները հասնեն իրենց նպատակներին, երեխաներս կարողանան հաջողություններ գրանցել ինքնուրույն և պիտանի մարդիկ դառնան հասարակության համար», - ասում է Նուրիջանը, իսկ Ինգան ամբողջացնում է, որ այդ բոլոր երազանքներն ամրամաստ կլինեին առանց խաղաղ, ապահով և ուժեղ հայրենիքի, ինչն իրենց ամենամեծ բաղձանքն է. «Ես միշտ բարձրաձայնում եմ՝ Հայաստանը մենք ենք, մեզանից է սկսվում մեր երկիրը, ու նաև մեր օրինակով պիտի ցույց տանք՝ ինչպիսին պիտի լինի օրինակելի հայ մարդը: Լինելով օրինավոր քաղաքացիներ՝ չենք խուսափում մեր ոչ մի պարտականությունից, նույնն էլ սովորեցնում ենք մեր աղջիկներին»:

Զրույցի վերջում Նուրիջանն ու Ինգան ընթերցողներին մաղթեցին սեր, համերաշխություն, ընտանեկան երջանկություն, կայունություն, փոխըմբռնում, սեփական էգոյի ու գոռոզամտության հաղթահարում և լիարժեք հասկացվածություն ցանկացած իրավիճակում:

Արփի ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՅ ՀՈԳՈՒ ՈՒ ՄՏՔԻ ԳՐԱՅԻՆ ԶԵՏԵՂԱՐԱՆՆԵՐԻՑ ՄԵԿԸ

Էջ 7 ←

Իր բաժին մեծ ջանքն է ի գործ դրել և դնում Հայրենիքն ու Սփյուռքը մեկ անտրոհելի ամբողջություն դարձնելու համար:

Ամսագրի առաջնային խնդիրներից է՝ պաշտպանել Հայ Եկեղեցու անկախությունը տարատեսակ գաղափարական ու ոչ գաղափարական գրոհներից, այլևայլ աղանդներից: Հիշյալ առաքելությունները այսօր շարունակում է կյանքի կոչել պատկառելի տարիքի հասած պարբերականը (զխավոր խմբագիր՝ Գևորգ Մարոյան):

Աղբյուրագիտական, իմացական մեծ արժեք ունեցող «Էջմիածին» ամսագիրը երևույթ է մի քանի հազարամյա Հայ Եկեղեցու և մի քանի հարյուրամյա հայ մամուլի պատմության մեջ: Աստծո օրհնությամբ թող այդ երևույթը ներկա լինի հայագետների բոլոր սերունդների կյանքում:

Հրաչյա ԲԱՆՈՅԱՆ
Բանասիրական գիտությունների
թեկնածու